Ազգ

Azg
armenian daily

30 ՅՈՒՆՈՒԱՐ 2004, ՈՒՐԲԱԹ 14 (2939)

Ստոկհոլմի համաժողովը ողջունել է ցեղասպանության կանխման վերաբերյալ Անանի առաջարկը

ՍՏՈԿՀՈԼՄ, 29 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ցեղասպանության կանխումը» միջազգային համաժողովը ողջունել է այդ հանցագործության դեմ պայքարելու վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի ներկայացրած առաջարկը: Ընդունված հռչակագրում համաժողովի մասնակիցները նշել են ցեղասպանության կանխման ՄԱԿ-ի կոմիտե եւ հատուկ շփման խումբ հիմնելու կարեւոր նշանակությունը, որոնց ստեղծման նախաձեռնությամբ այստեղ հանդես է եկել Կոֆի Անանը: «Ցեղասպանության մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն,- ասված է հռչակագրում:- Անհրաժեշտ է նաեւ ամեն ինչ անել ցեղասպանություններից փրկվածներին աջակցելու, նրանց բնականոն կյանքի վերադարձնելու համար»:

Հանդիպմանը կարեւորվել է ցեղասպանության վաղ կանխարգելման եւ դրան հակազդելու մեխանիզմների մշակումը:

«Նյու Յորք լայֆ»-ը՝ 20 մլն դոլար է փոխհատուցում Ցեղասպանության զոհերի իրավահաջորդներին

«Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունը պարտավորվել է 20 մլն դոլարի չափով փոխհատուցել իր այն հաճախորդներին, ովքեր Օսմանյան կայսրությունում դարձել են Ցեղասպանության զոհ: Վերոնշյալ 20 միլիոնից 3 միլիոնը հավասարապես միմյանց մեջ բաժանելու են հայկական 10 կազմակերպություններ, որոնք կարեւոր դեր են կատարել 1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքում բռնի տեղահանվածներին օժանդակելու գործում, հաղորդում է ԱՄՆ-ում լույս տեսնող «Ասպարեզ» օրաթերթը:

Ամերիկյան ապահովագրական «Նյու Յորք լայֆ» ընկերության դեմ փոխհատուցում ստանալու պահանջով հայց էր ներկայացրել ամերիկահայ փաստաբանների ընկերակցությունը՝ գլխավորությամբ հայտնի փաստաբաններ Մարկ Կիրակոսի, Ուիլյամ Շերնոֆի, Վարդգես Եղիայանի, Բրայան Կաղաթեմի:

«Այս դատական հայցը կրկին ապացուցում է, որ անցյալը մեռած չէ, անգամ՝ անցյալ չէ: Ես գիտեմ, որ այս վճիռը հետ չի բերի նույնիսկ մեկ հայ երեխայի կյանքը, բայց կարեւոր է, քանզի խորհրդանշում է մեր որոնումը՝ հասնել արդարության հանուն մեր պապերի, ովքեր կոտորվեցին Հայոց ցեղասպանության տարիներին», ասել է Վարդգես Եղիայանը:

Ամերիկահայ փաստաբանների ընկերակցության մի շարք անդամներ նիստի ընթացքում:

«Այս վճիռն արդյունք էր Հայոց ցեղասպանության պատմության վրա ուշադրություն հրավիրելու մեր անձնական արշավի», ասել է Բրայան Կաղաթեմը:

«Վճիռը առաջին կարեւոր քայլն է Հայոց ցեղասպանության դիմաց ֆինանսական փոխհատուցում ստանալու համար: Մենք համոզված ենք, որ մյուս ապահովագրական ընկերությունները կհետեւեն «Նյու Յորք լայֆին», ասել է Մարկ Կիրակոսը:

ԲՈՒՇ-ԷՐԴՈՂԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու Բուշի պահանջը Հայաստանի առաջընթաց քայլով է պայմանավորում Էրդողանը

ՀԱՅԿՈՒՀԻ ՉԱՔԱՐՅԱՆ

«Ազգը» նախորդ համարում, ելնելով Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիպ Էրդողանի Հայաստանի նկատմամբ «բարի կամք» դրսեւորելու եւ որպես բարի կամքի դրսեւորում Հայոց ցեղասպանության անհիմն պնդումներից հրաժարվելու հայերին հասցեագրած պահանջից, կարծիք էր հայտնել, որ Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններում համարժեք քայլերով պետք է չեզոքացնի «բարի կամքի» թուրքական դրսեւորումներն ու մերժի թուրքերի մեկնած «բարեկամական» ձեռքը:

Կարծիքը հիմնավորվել է տարածաշրջանում ընթացող քաղաքական զարգացումներով, ինչպես նաեւ Էրդողանի ԱՄՆ կատարած այցի Թուրքիայի համար ոչ բարենպաստ ավարտի հավանականությամբ: Այդ զարգացումները Հայաստանին Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը հակակշռելու հնարավորություն էր տալիս, իսկ այցի ոչ բարենպաստ ավարտը դա մեծապես ընդլայնում էր: Այս ամենի առումով հատկանշական է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի առանձնազրույցը Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ:

Հունվարի 28-ի երեկոյան Սպիտակ տանը կայացած այդ առանձնազրույցը, որը մոտ կես ժամ է տեւել, թուրքական կենտրոնական թերթերի ուշադրության գլխավոր առարկան էր: Թուրքիայում ամերիկյան քարոզչություն ծավալող այս թերթերը հասկանալիորեն Բուշ-Էրդողան առանձնազրույցը թուրք հասարակությանը մատուցեցին «Կատարյալ փոխըմբռնում» խորագրով, որպեսզի երկրում տպավորություն ստեղծվի, թե այցը թուրքական պետության անվիճելի հաջողությունն է: Հատկապես թուրք-ամերիկյան հարաբերությունների նախկին մակարդակը վերականգնելու առումով:

Տես էջ 5

Գերիների եւ դիակների փոխանակում «Հզբոլլահի» եւ Իսրայելի միջեւ

Իսրայելցի 3 զինվորի դիակների եւ 1 պահեստի սպայի դիմաց երեկ Իսրայելը Լիբանան վերադարձրեց 30 գերիների, որոնցից 23-ը՝ լիբանանցիներ էին: «Հզբոլլահի» գերիների Լիբանան վերադարձն իրականացավ գերմանական զինվորական օդանավով: Նրանց մեջ էր նաեւ շեյխ Աբդուլ Քարիմ Ղորեյդը, որ 14 տարի առաջ առեւանգվել էր Հարավային Լիբանանից իսրայելցի կոմանդոսների կողմից:

Գերիների վերադարձը Բեյրութի օդանավակայանում դիմավորվեց մեծ ցնծությամբ, հաղթական արտահայտություններով: Դիմավորող բազմության մեջ էին Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեբիհ Բերրին, վարչապետ Ռաֆիկ Հարիրին:

Հատկանշական է, որ նույն օրը, երեկ, Երուսաղեմում մահապարտ

ինքնասպանը պայթեցրեց քաղաքային ավտոբուսը, պատճառ դառնալով 10 քաղաքացիների սպանության եւ 45-ի վիրավորման: (Այս մասին ավելի մանրամասն՝ էջ 5-ում):

Բաքուն սկզբունքորեն դեմ չէ հինգ շրջանների վերադարձին

Ղարաբաղյան կարգավորման բանակցություններում Ադրբեջանի նախագահի անձնական ներկայացուցիչ, արտգործնախարարի տեղակալ Արազ Ազիմովն Ինտերֆաքս գործակալությանն ասել է, որ Բաքուն հավանություն է տալիս Եվրամիության այն առաջարկությանը, ըստ որի Ադրբեջանը պատրաստ է վերականգնել Բաքու-Նախիջեւան-Երեւան երկաթգիծը՝ պայմանով, որ Հայաստանն ազատի իր վերահսկողության տակ գտնվող 5 շրջանները (Զանգելան, Ջեբրայիլ, Ղուբաթլու, Աղդամ, Ֆիզուլի):

«Անշուշտ, Ադրբեջանը կցանկանար, որ դա տեղի ունենար խաղաղ ճանապարհով: Իմ կարծիքով, զավթված 7 շրջաններից 5-ի ազատումը եւ զուգահեռաբար դրա դիմաց երկաթուղու վերականգնումն ընդունելի նախագիծ է», ասել է Ազիմովը:

Դիվանագետը նաեւ նշել է, որ Եվրամիության այս առաջարկի իրագործումը վերջին հաշվով կախված է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներից:

Ռաֆայել Ակոպովը՝ «Պրոֆ-մեդիայի» գլխավոր տնօրեն

«Պրոֆ-մեդիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն է նշանակվել հայազգի Ռաֆայել Ակոպովը: «Պրոֆ-մեդիա» հրատարակչությանն է պատկանում ռուսական մի շարք ազդեցիկ պարբերականների, այդ թվում «Իզվեստիայի», «Կոմսոմոլսկայա պրավդայի», «Սովետսկի սպորտի» եւ «Էխպրես-գազետա» թերթերի, ինչպես նաեւ «Սեգոդնյա պրես» լրատվական գործակալության եւ մի շարք ռադիոկայանների բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, հաղորդում է Ինտերֆաքսը: 40-ամյա Ռ. Ակոպովը մասնագիտությամբ իրավաբան է, իրավաբանական գիտությունների թեկնածու, որ վարել է մի շարք խոշոր ընկերությունների իրավաբանական գործերը: 2001-2003 թթ. նա եղել է NTB հեռուստաընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալը ֆինանսների, ներդրումների եւ կադրերի գծով:

Հրաժարական տվեց նաեւ BBC-ի տնօրենը

«Փրկելու համար ռադիոհեռուստաընկերության անկախությունը», երեկ հրաժարական տվեց նաեւ BBC ռադիոհեռուստաընկերության գլխավոր տնօրեն Գրեգ Դայքը: Նախորդ օրը, ինչպես տեղեկացրել էր «Ազգը» երեկ, զբաղեցրած պաշտոնից հրաժարվել էր BBC ընկերության նախագահ Գավին Դեյվիսը, որպես արդյունք 3 օր առաջ հրատարակված լորդ Բրայան Հաթոնի զեկուցագրի, որն Իրաքի զանգվածային ոչնչացման զենքի որոնման գծով փորձագետ Դեւիդ Քելիի ինքնասպանության համար մեղադրել էր BBC ընկերությանը եւ լրագրող Էնդրյու Գիլիգանին:

Այսուամենայնիվ, բրիտանական մամուլի ներկայացուցիչները եւ մասնավորապես լրագրողական կազմակերպությունները գտնում են, որ լորդ Հաթոնի զեկուցագիրը խիստ միակողմանի էր եւ նպատակ էր հետապնդում ամեն գնով պաշտպանել վարչապետ Թոնի Բլերի քաղաքականությունը Իրաք ներխուժելու հարցում:

ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է ԳՅՈՒՂՆԱԽԱՐԱՐԸ

Մեր հավերն ու կովերը հիվանդ չեն

Հայաստանում կովերի կաթաղության եւ հավի գրիպ հիվանդությունների վտանգը ներկա պահին գոյություն չունի: Այս մասին երեկ հայտնեց գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոիյանը, ավելացնելով, որ այդ հիվանդությունների մասին մանրամասն տեղեկություններ են ստացվում ԱՄՆ գյուղատնտեսության հայաստանյան գրասենյակից:

Գյուղնախարարը, անդրադառնալով կառավարության երեկ ընդունած որոշմանը գյուղնախարարության կազմում անասնաբուժական-անասնաբուծական, անասունների համարակալման գործակալություն ստեղծելու մասին, նշեց, որ դա պայմանավորված էր 29 մարզային եւ շրջանային անասնաբուժական ծառայությունների ստեղծմամբ: Գործակալությունն այս տարի պետք է ավարտի խոշոր եղջերավոր անասունների համարակալումը, որը դարձյալ արվում է կենդանիների առողջությունը եւ սննդամթերքի



անվտանգությունը ապահովելու համար:

Դավիթ Լոիյանը, պատասխանելով հարցերից մեկին, հայտնեց նաեւ, որ տեղական արտադրությունն ապահովում է հավի մսի պահանջարկի մոտ 60 տոկոսը: Տարեկան 8-10 հազար տոննա էլ ներկրվում է: Իսկ տավարի, խոզի եւ ոչխարի մսի պահանջարկն ամբողջապես բավարարում են տեղական արտադրողները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հյուսիսային ոռոոտայի բնակիչները բողոքում են

Չինովնիկների եւ հասարակ քաղաքացիների շահերը կրկին բախվում են

Ապագա Հյուսիսային ոռոոտայի, ներկայում Պուլկինի, Լալայան, Տերյան փողոցների բնակիչները բողոքի հերթական ցույցն էին կազմակերպել կառավարության շենքի դիմաց:

Պատճառը փորձել կանխել այն որոշումը, ըստ որի պետք է փոփոխվի բնակարանների դիմաց փոխհատուցման կարգը, այսինքն՝ որոշումից հետո սեփականատերերին վճարվում է միայն գույքի արժեքը: Այդ գումարով տուն գնել քաղաքի կենտրոնում անհնար է, եւ մարդիկ ստիպված էին, որ հայրենի իշխանությունները չոտնահարեն իրենց իրավունքները: Բնակիչները դիմում-բողոք էին ուղղել վարչապետ Անդրանիկ Մարգարյանին՝ խնդրելով վերանայել նոր որոշումը: Բնակիչներից դիմում-բողոքը կառավարությունում այդպես էլ չընդունեցին եւ որեւէ կերպ չպարզաբանեցին: Ինչո՞ւ: Այս հարցի պատասխանը պարզ դարձավ ընդամենը մի քանի ժամից: Կառավարությունն, այնուամենայնիվ, փոփոխեց թիվ 950 որոշումը, որը սահմանում էր փոխհատուցման կարգը: Հաստատվեց նոր կարգ, որը կոչված է «պարզեցնել Հյուսիսային ոռոոտայում իրացման գործընթացը»: Մանրամասնենք, թե ինչ է ենթադրում այդ «պարզեցումը»: Սեփականատիրոջը կփոխհատուցվի գույքի արժեքը, որը կբավարարի մայրաքաղաքի ծայրամասում տուն գնելու համար:

Մեկ քառակուսի մետրի դիմաց առավելագույն փոխհատուցումը (այն էլ եզակի դեպքերում) 300 դոլար է, մինչդեռ հողի իրական արժեքը կենտրոնում մի քանի անգամ ավելի բարձր է:

Նրանց, ովքեր սեփականատեր չեն, բայց ունեն գրանցում, մեր կառավարության նոր որոշման համաձայն կտրվի 1800 դոլար մեկ անձի համար: Մնում է ենթադրել, որ Հյուսիսային ոռոոտայի ծրագիրն իրականացնողները տեղյակ չեն մայրաքաղաքի ուկայական գներին կամ վարում են «ջայլամային քաղաքականություն»:

Իսկ ինչպե՞ս էր իրականացվում փոխհատուցումը մինչեւ անցյալ տարեվերջ: Մարդկանց միջինացված ուկայական գներով, ըստ անձերի թվի, տրվում էր գումար համապատասխան քանակությամբ սենյակներով Երեւանի կենտրոնում (սեփականատերերին) կամ քաղաքի տարածքում (գրանցվածներին) բնակարան գնելու համար, եւ մարդիկ չէին դժգոհում:

Նոր որոշումը վերջերս քաղաքապետ Երվանդ Զախարյանը պայմանավորեց նրանով, որ 9 քմ-ի վրա գրանցվում է 10 մարդ, եւ Հյուսիսային ոռոոտայի ծրագրի իրականացման գրասենյակը ստիպված էր լինում 10 բնակարանի գումար տալ: Այս միտքը զարգացրին նաեւ իշխանամետ հեռուստաընկերությունները, նկարահանեցին վաս վիճակում գտնվող տներ եւ տպավորություն ստեղծեցին, թե իբր բնակիչները ծայրահեղ պահանջներ են ներկայացնում, եւ իշխանությունները որոշել են պայքարել «անօրեն» բնակիչների դեմ: Չբացառենք, որ նման դեպքեր եղել են, սակայն ինչու դրա համար պետք է պատասխան տան բոլորը: Իսկ գուցե պատասխանատվություն պետք է կրեն նրանք, ում անմիջական մասնակցությամբ կատարվել են այդ գործարքները: Արդեն նշեցինք, որ մեկ քմ-ի համար առավելագույն փոխհատուցումը կազմելու է 300 դոլար, մինչդեռ եղել են դեպքեր, երբ տրվել է... 3 հազար դոլար: Հետաքրքրական մոտեցում է նույն ծրագրով, նույն տարածքից տեղահանվող բնակիչների նկատմամբ:

Երվանդ Զախարյանը հայտարարեց նաեւ, որ Հյուսիսային ոռոոտայի ԾԻԳ-ի բյուջեում ծեղքված կա: Հաշվի առնելով վերը նշված փաստերը, զարմանալի չէ: Եվ այդ ծեղքվածքը որոշել են փակել մյուս բնակիչների հաշվին: Հայաստանյան իրականության մեջ ընդունված տարբերակ է:

Մարդիկ շարունակելու են պայքարել, քանի որ նոր պայմաններին համաձայնելու դեպքում փորր կենտրոնում առած սեփականատերը տուն պետք է փնտրի Երեւանի ծայրամասում, իսկ նրանք, ովքեր գրանցված են, պետք է վերցնեն 1800 դոլարը եւ հարմար տեղավորվեն որեւէ... կամրջի տակ:

Հնարավոր կլինի՞ արդյոք, որ հասարակ մարդու շահը հերթական անգամ չստորադասվի չինովնիկի շահին: Հաշվի առնելով, որ շատ բարձրաստիճան պաշտոնյաներ են խիստ հետաքրքրված այս տարածքով՝ միշ հավանական է: Իսկ որ բարձրաստիճան պաշտոնյաների հետաքրքրվածությունը կա, բնակիչները հաստատ գիտեն: Գույքը գնահատող կազմակերպության հետ մարդիկ կապում են արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի եղբոր անունը (նման լուրեր տարածված են) եւ պատահական չեն համարում, որ օրերս ֆանդված տների փլատակներն ու շինհրապարակներն իրենց համար զբոսանքի վայր են դարձրել հանրապետության որոշ ղեկավարներ:

ԱՐՄԵՆ ՀԱԲՈՒԹՅՈՒՆ

Սեռական ոտնձգություններ աշխատատեղերում

Հաճախ մեր շրջապատում լսում ենք այնպիսի պատմություններ, որ կանայք աշխատավայրում ենթարկվում են սեռական ոտնձգությունների իրենց ղեկավարների կողմից: Շատերը, որպեսզի չկորցնեն աշխատատեղը (40-ից բարձր տարիք ունեցողները) ենթարկվում են: Այդ խնդիրը լրջորեն մտահոգել է «Կանանց ֆորում» ՀԿ-ին, որն էլ «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացնում է «ՀՀ-ում սեխուալ ոտնձգություններն աշխատատեղում» ծրագիրը, որի նպատակն է նպաստել ՀՀ-ում կանանց աշխատանքային իրավունքների ու պարտականությունների իրականացման եւ պաշտպանության արդյունավետ կարգավորմանը:

Երեկ կազմակերպության տնօրեն Լիլիթ Ավետիսյանը լրագրողներին ներկայացրեց «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի (տնօրեն՝ Սիարոն Ադիբեկյան) սոցիոլոգիական հարցման համառոտ հաշվետվությունը: Նա, ինչպես նաեւ իրավաբանների խումբը առաջարկում են ճնշարկվող ՀՀ աշխատանքային օրենսգրքի նախագծում ավելացնել դրույթներ, որոնք կնպաստեն ՀՀ օրենքներով եւ այլ իրավական ակտերով երաշխավորված աշխատողների իրավունքների եւ ազատությունների պահպանմանը, զերծ կպահեն նրանց աշխատատեղում տարբեր տեսակի կամայականություններից, ոտնձգություններից:

Կազմակերպությունը կոչ է անում բոլոր շահագրգիռ անձանց միանալ եւ աջակցել ծրագրի շրջանակներում իրականացվող օրենսդրական բարեփոխումներին ուղղված ժողովրդավարական այս նախաձեռնությանը:

«Ազգ» առաջիկայում մանրամասն կներկայացնի «Սոցիոմետրի» ուսումնասիրության արդյունքները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԻՍՅԱՆ

Նամակները տեղ կհասնեն առանց ուշացման

Հայաստանցուց տրանսպորտի եւ կապի նախարարը

«Փոստային կապի» մասին օրենքով, որի նախագիծը երեկ հաստատեց կառավարությունը, ներդրվելու է ունիվերսալ ծառայությունների համակարգը: Այն ենթադրում է նամակաբաշխները, մինչեւ 20 կգ ծանրոցները, թերթերն ու ամսագրերը հասցեատիրոջը առանց ուշացման հասցնելու պարտավորությունը: Տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը երեկ հայտնեց, որ պատասխանատվության նորմերն այստեղ շատ խստացված են, եւ եթե նամակը կամ փոստով ուղարկված մյուս իրերը ժամանակին չեն հասնում հասցեատիրոջը, ապա խիստ տույժեր եւ տուգանքներ են նախատեսված: Ունիվերսալ ծառայությունների ցանկի ներդրումը Համաշխարհային փոստային միության եւ Եվրամիության պահանջն է նաեւ: Համաձայն օրենքի, այս դաշտում կգործեն ինչպես ազգային օպերատորը, այնպես էլ այլ օպերատորներ: Ազգային օպերատորը կորոշվի կառավարության կողմից: Նախարարի կարծիքով, դա ամենայն հավանականությամբ կլինի «Հայփոստը»: Ծառայությունների սակագները եւս որոշելու է կառավարությունը: Համակարգը պետք է իրականացնի նաեւ դրամական փոխանցումներ, որի համար լիցենզիա կտրվի Կենտրոնական բանկից:

«Շահավե՞տ է բիզնեսի առումով փոստային ծառայությունների մատուցումը» հարցին Անդրանիկ Մանուկյանը դրական պատասխանեց, նշելով սակայն, որ կան մեծ ծախսեր կատարված հեռավոր բնակավայրեր նամակներ կամ այլ իրեր հասցնելու հետ:

Ա. Ս.

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՀՀ տարեկան բյուջեի մոտ 1 տոկոսը՝ եւ Երեւանի մետրոպոլիտենը կլուծի իր բոլոր խնդիրները

«Եթե համեմատենք ԱՊՀ համանման մետրոպոլիտենների ցուցանիշները, կտեսնենք, որ Երեւանի մետրոպոլիտենում գծի 1 կմ-ի վրա աշխատողների թիվը, 1 կմ-ի շահագործման ծախսերը ամենափոքրն են, սակայն ամենացածր ուղեւորափոխադրման ծավալի պատճառով մեր մետրոպոլիտենի ինքնարժեքն ամենից բարձրն է», ասաց «Կ. Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ գլխավոր տնտեսագետ Հարութ Ամատունին «Ազգի» թղթակցին:

2003-ի նոյեմբերի 6-ին կառավարությունը որոշում է ընդունել, որտեղ ուսումնասիրությունների արդյունքում գրվում է, որ Երեւանի մետրոպոլիտենի տեխնիկական վիճակը գնահատվում է վատթար:

Երբ քաղաքում սկսվում են ձնհալը, անձրեւները, Երեւանի մետրոպոլիտենի հատկապես «Զորավար Անդրանիկ» կայարանում պատերը խոնավանում են, լինում են դեպքեր էլ, երբ սալաքարերի արանքից ջրեր են դուրս գալիս: Մետրոպոլիտենի բողոքարկումից անմիջապես հետո «Զորավար Անդրանիկ»-«Հանրապետության հրապարակ» հատվածը լցված է եղել ստորգետնյա ջրերով: Այժմ գործող ջրահեռացման համակարգն այսպիսին է՝ պոմպերի միջոցով ջուրը ներծծվում է «Զորավար Անդրանիկ» կայարան, այնտեղից հորանի միջոցով թափվում Հրազդան գետը: Կա նախագիծ՝ հորանը մինչեւ Հանրապետության հրապարակ հասցնել, սակայն դա մեծ ֆինանսների հետ է կապված: «Պոմպերը շատ էլեկտրաէներգիա են օգտագործում, եթե հորանը երկարացվեր, մեծ խնայողություններ կանեինք», ասաց պրն Ամատունին: Չնայած անգեն աչքով էլ որոշ կայարաններում պատերին կարելի է տեսնել ստորգետնյա ջրերի աղակալած, ժանգոտ հետքեր, Հարութ Ամատունին վստահեցնում է. «Տարիներ որ անցնեն, մի բան կարող է փլուզվել, բայց հիմա մենք ամեն գիշեր պրոֆիլակտիկ ստուգումներ ենք կատարում, այդ սարսափելի ջուրը որ տեսնում ես, միայն թաց եղանակին է, իրականում այնքան էլ վախենալու չէ»:

Առհասարակ, մետրոպոլիտենի գլխավոր տնտեսագետը նշում է, որ շարժակազմի, շարժասանդուղքի, ընթացքային բուսելների, օդափոխման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջրաիջեցման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների անհրաժեշտություն կա: Կան կառավարության որոշումներ, սակայն նշված չեն ֆինանսավորման ձեւերը, աղբյուրները: Կառավարությունը խոստացել էր, որ տարվա սկզբից մետրոպոլիտենի ուղեւորափոխադրումը բացառապես վճարովի կլինի, սոցիալական 12 խմբերը, որ նախկինում անվճար էին երթեւեկում, նման արտոնություն այլեւս չեն ունենա: Սուբսիդիան էլ հաշվարկվել էր՝ ենթադրելով, որ տարեկան եկամուտը կաճի 175 մլն դրամով: Հունվար ամիսը վերջանում է, բայց ուղեւորափոխադրման որոշումը դեռեւս ընդունված չէ, իսկ մետրոպոլիտենը կորուստներ է կրում:

Մետրոյում կառուցված են որոշակի համակարգեր, որոնք պետք է հարկ եղած դեպքում ապահովեն բնակչության անվտանգությունը, բայց այստեղ միլիարդների աշխատանք կա անելու: «Կա «Արտակարգ իրավիճակների հետեւանքների նվազեցման ու վերացման, բնակչության պահպանության 2000-2004 թթ. ծրագրերի մասին» կառավարության որոշումը, սակայն ֆինանսավորման ձեւը, աղբյուրը դեռ չի գտնված», ասաց պրն Ամատունին: Բայց նա նաեւ ավելացրեց, որ միջոցներ են հայթայթում եւ վերանորոգման աշխատանքներ կատարում՝ համաձայն վերանորոգումների աշխատանքների հաստատված ծրագրի:

Աջափնյակ կայարանի կառուցման հետեւանքով ուղեւորների թիվը տարեկան կավելանա 4.7 միլիոնով, որը տարեկան եւս 235 մլն դրամ գումար կբերի մետրոպոլիտենին: Սակայն մետրոյի կամուրջը կառուցելու եւ կայարանն ավարտելու համար մոտ 11 մլդ դրամ է անհրաժեշտ:

Ըստ պրն Ամատունու՝ մետրոպոլիտենում կենտրոնական օդերեւիթ կառավարման համակարգի ստեղծման ծրագիր կա: Առաջնահերթ է ուղեւորների հաշվառման, ուղեվարձի գանձման համակարգի նորացումը: Պլաստիկ քարտային համակարգի անցնելու դեպքում դրամարկղային աշխատակցի գործոնը կվերանա, կվերանան խոսակցությունները, թե հսկիչները լրացուցիչ գումարներ են վերցնում: Հնարավոր կլինի կիրառել գնային ճկուն քաղաքականություն, օրինակ՝ 10 նստեցման քարտը ոչ թե կարժենա 500, այլ 480 դրամ, 1000 նստեցման քարտը ոչ թե 50000, այլ 35000 դրամ:

Ավելի քան 20 տարի շահագործման հանձնված Երեւանի մետրոպոլիտենում գործարկումից ի վեր տեխնիկան չի արդիականացվել, եղել են դեպքեր, երբ պահեստամաս չեն կարողացել գտնել, քանի որ արդեն 10-15 տարի է՝ արտադրությունից դուրս է եկել: **«Ազգ»-ի** այն հարցին, թե կախարդական փայտիկով փերին որքան գումար պիտի հատկացնի Երեւանի մետրոպոլիտենին՝ բոլոր խնդիրները լուծելու համար, գլխավոր տնտեսագետն ասաց. « Զրաստ հորանի համար՝ 2 մլն դոլար, համակարգերի ավտոմատացման եւ արդիականացման համար՝ 1 մլն 300.000 դոլար, ուղեւորաստ ավտոմատիկայի համակարգը փոխելու, պլաստիկ քարտային համակարգին անցնելու համար՝ 400.000 դոլար, ջրամեկուսացման աշխատանքների համար՝ 120.000 դոլար, ընդամենը՝ 3 մլն 820 հազար դոլար»:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 04 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
հրատարակչային համակարգով
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ օսդիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

ԱԺ-ում կներկայացվեն գյուղմթերք արտադրողի իրական հոգսերը

Գուցե վերջապես հիշեն մեծածախ շուկայի անհրաժեշտության մասին

ԱԺ նախագահին կից ստեղծված Փոքր եւ միջին ձեռներեցության աջակցության խորհուրդը օրենսդրական նախաձեռնությունների հաճախ տեսական, հայեցողական ուղղվածությանը ավելի իրատեսական բնույթ հաղորդելու խնդիր ունի իրականացնի: Համենայն դեպս, այդպիսի տրամադրվածություն ու հույսեր ունեին երեկ ԱԺ նախագահի մոտ այս տարվա առաջին հանդիպումը հրավիրած, հանրապետության մարզերը ներկայացնող գործարարները: Երեկ խորհրդի գյուղատնտեսության ու ագրոարդյունաբերական հանձնախումբը ներկայացրեց այս ոլորտում փոքր ու միջին բիզնեսի 2004 թ. գործունեության հայեցակարգը: Սեփական փորձը, ձախողումներն ու հաջողությունները նկատի առնելով Նաիրիի, Կոտայքի, Իջեւանի, Արմավիրի, Արարատի գործարարները մի շարք գործնական առաջարկներ են արել, որոնք պետք է առողջացնեն գյուղատնտեսության՝ վաղուց սրբագրումների ու իրական աջակցության կարիք զգացող ոլորտը: Իսկ ի՞նչ է կատարվում այնտեղ հենց գործարարների դիտարկումներով:

Գյուղմթերքների արտադրության ոլորտում այսօր ներգրավված են 350-400 հզ. արտադրողներ, ովքեր գործում են առանց ֆինանսական, ապահովագրական, նյութատեխնիկական օգնությունների, առանց պետության ու օրենքի պաշտպանության: Պարարտանյութեր, բուժանյութ ու տեխնիկա սփռված են հայթայթել ինքնուրույն, երբեմն խախտելով ժամկետները, երբեմն սփռված լինելով օգտագործել անորակ սերմացու կամ պարարտանյութ, որովհետեւ դա է հաջողվել ճարել: Հողօգտագործողների մեծ մասն աշխատում է վնասով՝ եկամտի մեծ՝ մասը հանձնելով միջնորդին, որովհետեւ չկան եւ այդպես էլ չստեղծվեցին մեծածախ շուկաներ: Գյուղմթերք արտադրողների 50-60 տոկոսը, ըստ հանձնախմբի դիտարկումների, հասել է աղքատության շեմին: Նրանց անհաջողություններ պատճառաբանվում են ոչ միայն շուկայում գնագոյացումների մոնոպոլ միտումներով, այլեւ հենց արտադրողների մասնագիտացման ցածր մակարդակով: Նրանք բոլորը վարում են, փաստորեն, ունիվերսալ արտադրություն:

Ընդհանուր առմամբ, ողջ հանրապետությունում օգտագործվում է գյուղատնտեսական հողերի ընդամենը 50 տոկոսը, դրանց 10-15 տոկոսը անապատացել է, գործում են վերամշակող կամ այլ կառույցների 5-10 տոկոսը:

Միայն վերջին 3 տարիների ընթացքում 35-40 գյուղական համայնքներ լուծարվել են, հատկապես սահմանամերձ գոտիներում: Գյուղացին լքում է ոչ միայն գյուղը, այլեւ հայրենիքը: Մինչդեռ 350-400 հզ. գյուղմթերք արտադրողը հզոր պոտենցիալ է երկրի համար: Գյուղն ու գյուղմթերք արտադրողը այս վիճակում են 1991 թ.-ից, հողի սեփականաշնորհումից ի վեր: Եվ իբրեւ հակակշիռ ներքին քաոսի ու անկարգության, մեր վաճառակետերում անկանխելի շրջանառվում է դրսից ներկրված ցածրորակ արտադրանքը, որը ոչ միայն հարվածում է հայրենական կաթիսալի ոստի կանգնելուն, այլեւ պարենային անվտանգությանը, եւ մեր շուկան խոցելի դարձնում դրսի աննպաստ ազդեցությունների նկատմամբ:

Գյուղատնտեսական ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատերերը գյուղատնտեսությունը փրկելու դեղատոմսը համարում են մասնավոր հատվածի զարգացումը համալիր, ընդհանրական հիմունքներով: Եվ անկախացումից ի վեր նման սկզբունքի կիրառումն առաջին փորձն է:

Նոր ճյուղերի զարգացումը, հատկապես վերամշակող արդյունաբերությունը պիտի հենվի բացառապես տեղական հումքի բազայի վրա:

Պիտի ստեղծվեն ենթակառուցվածքներ, ինչպես մեծածախ շուկաները, որոնք պիտի կանոնակարգեն հարաբերությունները արտադրողի, վերամշակողի, վաճառողի միջեւ: Ի դեմ, հանրապետությունում մեծածախ շուկաներ ստեղծելու խոսակցությունները վաղուց են սկսվել, միջազգային կազմակերպությունները հսկայական գումար տրամադրեցին այդ նպատակին, սակայն գումարներն էլ փոշիացան, խոսակցություններն էլ: Երբ այս մասին հիշեցրեցինք խորհրդի Արարատի բաժանմունքի անդամ Արսեն Պետրոսյանին (ով ժամանակին նույնպես շահագրգիռ էր խնդրի լուծման համար), նա պատասխանեց. «Այդ մասին հարցրեք գյուղնախարարության մասնագետներին: 3-4 տարի առաջ անհայտ պատճառներով ծրագիրը կասեցվեց, բայց Հայաստանն ի վերջո պե՞տք է ունենա իր մեծածախ՝ ապրանքաշրջանառությունը կարգավորող շուկաները եւ մարզերում, եւ մայրաքաղաքին կից: Ամբողջ երկրի գյուղմթերքների շրջանառությունը «Մալաթիա» շուկայում, շենքերի առանձին հրականացնելը բարբարոսություն է»:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Օրենքն այնուամենայնիվ չի գործում

Սպառողների շահերի պաշտպանության օրենքն ընդունվեց 2001 թ. հունիսին: Դրանից դեռ 10 տարի առաջ Սպառողների ազգային ընկերակցությունը նախաձեռնեց օրենսդրության մշակումը: 4 տարբեր նախագծեր են ներկայացվել կառավարություն, քարոզարշավ է կազմակերպվել հանրապետությունում, նորից լրամշակվել է օրենքի նախագիծը եւ ի վերջո ընդունվել արտահերթ նիստում: Այդ օրենքի գործողության ժամանակաշրջանի, եւ այդ ընթացքում սպառողական շուկայի՝ մինչ օրս փոխակերպումների ամփոփումն էր խնդրին հետամուտ հասարակական երկու կազմակերպությունների (Սպառողների ազգային ընկերակցություն, Սպառողների շահերի պաշտպանության միություն) եւ լրատվամիջոցների հանդիպումը: Երկարատեւ պայքարից հետո օրենքն ընդունվեց, բայց ինչ է տվել սպառողին: Անգործության շրջանում կարված, անհաղորդ ու անտեղյակ իր իրավունքներին՝ նա շարունակում է վնասվել իրեն: 10 տարի առաջ եւ այսօր սպառողական շուկայի վիճակը նույնը չէ, եւ օրենքի հասարակական պաշտպանները նշում են իրենց դերակատարումը իրողությունների դրական ուղղվածության մեջ: Սպառողները, թեեւ պասսիվ իրենց իրավունքները պաշտպանելու հարցում, բայց գոնե ավելի իրազեկ են դարձել, ավելի զգույշ ու գրագետ: Սոցիոլոգիական վերջին հարցումներն ապացուցել են (4000 սպառողների շրջանում), որ սպառողների գոնե 42 տոկոսը տեղյակ է օրենքի գոյության մասին, բայց անտեղյակ՝ դրա դրույթներին: Այդուհանդերձ, վերջին տարիներին նրանք բավական ակտիվություն են ցուցաբերում սպառողների հասարակական կազմակերպությունների հետ հարաբերություններում: 1 տարվա ընթացքում ընկերակցությունը 100 դիմում է ստացել, 500 հեռախոսազանգեր: Նրանց բողոքները հիմնականում ուսումնասիրվել են:

Կ. Դ.

Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը շարունակում է իր 35-րդ թատերաշրջանը

Փետրվարի 6-ին՝ «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը», 7-ին՝ «Ռոմեո եւ Ջուլիետա», 8-ին՝ «Անվերջ վերադարձ»:

Այնուհետեւ՝ «Կատակերգություն», «Հուլիոս Կեսար», «Մեծ լռություն», «Կինը եւ տղամարդը», «Մոռանալ Հերոսներին», «Ավտոբուս», «Ջան», «Ակամա բժիշկ», «Ագռավը», «Իմ սիրտը լեռներում է», «Բարեւ, սիրկաներ»:

Փետրվարի 13-ին եւ 21-ին՝ նոր բեմադրություն, էդվարդո դե Ֆիլիպպո՝ «Ցիլինդր»:

Ներկայացումների սկիզբը ժ. 19-ին:

Թատրոնի շենքը ջեռուցվում է:

Տեղեկատու հեռախոս՝ 52-47-23:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ՝ ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՁԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսուհետեւ նոտարական փաստաթղթերը կտրվեն միայն պատշաճի պիտակներով

Երեկ արդարադատության նախարարությունում լրագրողների հետ հանդիպեց ՀՀ արդարադատության նախարարության նոտարիատի վարչության պետ, արդարադատության երրորդ դասի խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան Մարիամ Գաբոյանը: Նա սկզբից ներկայացրեց: 1999 թ. հունվարից քաղաքացիական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, նախկինում գործող «Նոտարիատի մասին օրենքը» շատ հնացած էր, եւ բնական էր, որ նույն քաղաքացիաիրավական հարաբերություններին չէր կարող տեսակի փաստաթղթեր, որոնք միայն լաբորատոր հետազոտման միջոցով է հնարավոր հայտնաբերել, դրանց թվում են՝ ամուսնության վկայականները, դիպլոմները, ծննդյան ու մահվան վկայականները, նոտարական փաստաթղթեր, հայտարարություններ եւ այլն, որոնք բնօրինակից տարբերել հնարավոր չէ: Կեղծում են անգամ ինչ-որ մեկի սեփականության իրավունքի վկայականը՝ բերված կադաստրի վարչությունից... Եվ ահա, 2004 թ. հունվարի 7-ից գործածության մեջ են մտել պաշտպանիչ ինքնասարկել, ուստի փոխվեց նաեւ այդ օրենքը: Օրենքը 2002 թ. մարտի 1-ից գործողության մեջ մտավ: Այդ օրենքով առաջին անգամ նոտարներն ունեցան մեծ պաշտպանվածություն, իսկ քաղաքացիներն օգտվեցին, քանզի նոտարները ստացան նաեւ գույքային պատասխանատվություն...

«Նախկինում նոտարները միայն փաստաթղթեր վավերացնողներ էին, ասաց տկն Գաբոյանը եւ ավելացրեց, որ նոր օրենքով նոտարի վրա դրվեցին այնպիսի պարտականություններ, որ նա հանդես է գալիս որպես կողմ՝ երրորդ անձ եւ մասնակցում է կողմերի իրավունքների ու պարտականությունների իսկակեցմանը»:

2003 թ. ընթացքում վարչության կողմից լեգալացվել է արտատիմանում գործելու համար նախատեսված 9454 փաստաթուղթ, որի համար գանձվել է շուրջ 47 մլն 270 հազար դրամ պետական տուրք: Տկն Գաբոյանը նշեց նաեւ, որ կեղծվում են ամեն նատանձվող պիտակներ, որոնք դրվում են նոտարի կնքած կլոր կնիքի մոտ: Պիտակներն ունեն պաշտպանական 10 շերտ եւ միայն կաղույտ լույսի տակ է հնարավոր կարդալ համապատասխան գրությունը: Նորամուծության մասին տեղեկացրել են բոլոր պետություններին, ուղարկվել են նմուշներ:

«Ազգի» հարցին, թե «ինչո՞ւ նոտարական գրասենյակներում գանձվող սակագները բարձր են», տկն Գաբոյանը համաձայնեց, որ հաստատագրված արժեքով գանձումն այնքան էլ ճիշտ չէ, եւ այդ հարցն առաջիկայում կներկայացվի կառավարությանը՝ վերանայելու:

Անցած տարի 2 նոտար հեռացվել է աշխատանքից, 2-ը ստացել է խիստ նկատողություն: Իսկ 11 գործ ուղարկվել է դատախազություն՝ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԿԱՐՅԱՆ

Որակի միջազգային սերտիֆիկատ հայկական ընկերությանը

Հայաստանի երկրորդ շինարարական կազմակերպությունը՝ «Իտարկոն ինսթրաքշընը» այսօր կստանա ISO-9001 միջազգային սերտիֆիկատ: Այդ կապակցությամբ ընկերության ղեկավարությունը երեկ մամուլի ասուլիս էր հրավիրել, որի ժամանակ ներկայացվեցին կազմակերպության իրականացրած աշխատանքները, նպատակներն ու միջազգային սերտիֆիկատ ստանալու գործընթացը, դրա ընձեռած հնարավորությունները:

«Իտարկոյի» գլխավոր տնօրեն Արագած Ախոյանը նախ հայտնեց, որ իրենց ընկերության հիմնադիրներն ու խոշոր բաժնետերերն են ՀՀ-ում գործող հայ հայտնի գործարար, «Ֆրանկ Մյուլլեր» ժամացույցների արտադրության բաժնետեր Վարդան Սերմակեշը եւ նրա գործընկեր Հրաչ Կարդիելյանը ԱՄՆ-ից: Այնուհետեւ թվարկվեցին ընկերության կառուցած առավել հայտնի շինությունները: Դրանք են Երեւանի Հանրապետության հրապարակի խճանկար գորգը, Ջերմուկ քաղաքի կամուրջի հիմնանորոգումը, HSBC բանկի մասնաճյուղը, Վահագնի թաղամասում առանձին շենքեր եւ այլն: Սրանցից Ջերմուկի կամուրջի նորոգումը, ինչպես նաեւ «Մետրոպոլ» հյուրանոցի նոր մասնաշենքի շինարարության պատվերները կազմակերպությունը շահել է մրցույթով: Իսկ ընդհանուր առմամբ այս տարի «Իտարկոն», գլխավոր տնօրենի հավաստմամբ, շուրջ 1 մլն դոլարի պատվերներ ունի:

Ինչ վերաբերում է ISO-9001-2000 ստանդարտին, ապա այն ներդրվել է «Հայկոնսալտ» խորհրդատվական ընկերության հետ համատեղ: Սակայն սերտիֆիկատը տվել է անգլիական «Գլոբալ սերտիֆիկեյշն» կազմակերպությունը: Մինչ այդ ստուգվել են կառուցված օբյեկտները, ուսումնասիրել դրանց որակական չափանիշներն ու շինարարության կուլտուրան: Այս ստուգումները պարբերաբար (6 ամիսը մեկ անգամ) շարունակվելու են:

Արագած Ախոյանը համոզմունք հայտնեց, որ իր ղեկավարած ընկերությունը կհասնի աշխատանքների կատարման միջազգային չափանիշների, ինչը հնարավորություն կտա շինարարական աշխատանքներ իրականացնելու նաեւ արտաքին շուկայում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սոճիների սանիտարական հատումները կիրականացվեն ամռանը

Հայտնի է, որ կառավարության որոշմամբ արգելվեցին սոճիների ամանորյա հատումները: Անցած Ամանորին հատվեց ընդամենը 3000 ծառ: Անտառագետ Անդրանիկ Պուլիջանյանի համոզմամբ, սակայն, հատկապես Տաշիրում ու Ստեփանավանում դեռ խորհրդային տարիներից տնկած սոճուտները խիտ անտառներ են կազմել եւ անպայման նորացումների կարիք ունեն: Դա խելամիտ էր իրականացնել ծմռանը, երբ հնարավոր կլիներ եւ բնական տոնածառերով զարդարել Ամանորը, եւ անհրաժեշտ միջոցառումն իրականացնել: Սակայն դեկտեմբերյան նորացումների ժամանակ, անկախ այն ամենից, թե ովքեր էին իրականացնելու հատումները, լավագույն ծառերին էր նախապատվություն տրվելու: Հնամյա, արդեն իրենց կյանքն ապրած սոճիների նորացումներն այժմ իրականացվելու են գալիք ամռանը: Այս դեպքում դրանք նույնիսկ իբրեւ վառելափայտ օգտագործելու հնարավորություն էլ չի լինի:

Կ. Դ.

Երկարատև խառնաշփոթից հետո մեր կրթական համակարգը գնում է դեպի «միջազգային չափանիշներ»

Հարցազրույց կրթության եւ գիտության նախարար Մերգո Երիցյանի հետ

- Առաջիկա օրերին հանրության քննարկմանը կդրվի նոր կրթակարգը, որը թելադրում է կրթական նոր ծրագրեր, գնահատման այլ համակարգ, բոլորովին նոր դասագրքեր: Կրթական համակարգում վերջին տարիների խառնաշփոթին փոխարինելու է գալիս մի իրավիճակ, որ կարծես ամեն ինչ սկսում ենք զրոյից: Համոզիչ ի՞նչ երաշխիքներ կան ասելու, որ իրականացվող փոփոխությունները կբարձրացնեն կրթական մակարդակը:

- Նախ համաձայն չեմ, որ ամեն ինչ սկսում ենք զրոյից: Նոր կրթակարգի հիմքում ընկած են թե՛ խորհրդային դպրոցի լավագույն ավանդույթները, թե՛ սեփական ծրագրեր ու դասագրքեր կազմելու վերջին 10-15 տարիների մեր փորձառությունը, իսկ ամենագլխավորը՝ եղած կրթական մակարդակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը: Ինչ վերաբերում է նոր ծրագրերին, ապա ակնկալում ենք 12-ամյա ուսուցման ընթացքում աշակերտին տալ հիմնարար գիտելիքներ, զարգացնել ոչ միայն աշակերտի գիտելիք ստանալու, այլեւ ստացած գիտելիքը կյանքում կիրառելու հնարավորությունը, նաեւ ստեղծագործաբար վերաբերվելու ունակությունն ու մտածելու կարողությունը: Մենք ենթադրում ենք, որ նոր կրթակարգը հնարավորություն կտա դպրոցի ավարտական քննությունները բուհականի հետ համատեղելու, թոթափելու առարկաների ծանրաբեռնվածությունը, միաժամանակ մոտ 20 տոկոսով հավելելու նոր առարկաներ: Խնդիրն այն է, որ ներկա կրթակարգում որոշակի առարկաների պակաս կա, որոնք աշակերտին պիտի օգնեն կյանք մտնելու շեմին:

Առաջիկա օրերին կրթակարգը կհրապարակվի մամուլում, գրքույկների տեսքով կբաժանվի դպրոցներին ու կրթական մյուս հասցեներին: Արձագանքների ու քննարկումների հիման վրա կունենանք կարծիքների ամբողջականություն, պարզորոշ կերեւա մտավորականության վերաբերմունքը:

- Իսկ հասարակական քննարկումների հիման վրա կարվե՞ն լրացումներ ու փոփոխություններ, թե դիտողությունները կմնան սոսկ թղթի վրա:

- Անկասկած, հասարակական կարծիքը հաշվի կառնվի, կմտցվեն որոշակի փոփոխություններ, հակառակ դեպքում անիմաստ կլիներ հանրընդհանուր քննարկման դնելը: Կրթության խնդիրն ամենքիս է առնչվում, ուրեմն պետք են նոր մոտեցումներ, բովանդակային հարցերի համակողմանի վերլուծություններ:

- Կրթական բարեփոխումների ամենախոցելի շրջանը օպտիմալացումն էր, որը մի տեսակ դուրս մնաց վերահսկողությունից, ինչն էլ, շատ դեպքերում, տեղիք տվեց կամայականությունների, ուսուցիչների աղօրինի կրճատումների:

- Օպտիմալացման քաղաքականությունն հռչակել էր նախարարությունը, սակայն իրականացումն ապահովել են մարզպետարանները: Ունենք ընդհանուր թվով 1480 դպրոց, բնականաբար, նախարարությունը ոչ մի կերպ չէր կարող վերահսկել, թե ինչպես է իրականացվում իր իսկ մշակած քաղաքականությունը: Մենք ամենօրյա կապ ունենք մարզպետարանների հետ, գիտենք 350 դիմում-բողոքների մասին, որոնք առնչվել են այս գործընթացին: Այսօրվա դրությամբ 34 ուսուցիչներ վերականգնվել են աշխատանքում: Նրանց կրճատելու պատճառը եղել է օրենքի կամ կարգի ոչնահարումը, օրենքի չիմացությունը, կամ էլ օրենքի ոչ ճիշտ մեկնաբանումը: Անկասկած, սա որոշակի եզրահանգումների տեղիք է տալիս, որ բացառված չեն կամայականությունները: Ներկայումս ընթանում են դատական գործեր՝ ուսուցիչների իրավունքները վերականգնելու համար:

Այս ամենը մեզ հուշում է, որ ժամանակն է նախարարությունում վերականգնելու տեսչական ծառայությունը: Այսօր ունենք տեսչական փոքր բաժին, որտեղ աշխատում են ընդամենը 7 հոգի, իսկ այդքանով ոչ մի կերպ հնարավոր չէ իրականացնել պահանջվող մեծածավալ աշխատանքը:

- Իսկ ի՞նչ կասեք, երբ դպրոցի տնօրենի քմահաճությամբ մանկավարժական ուսումնարանն ավարտածն ավելի շատ դասաժամեր ունի, քան պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետ ավարտածը: Սա չի՞ վկայում, որ վերջին տարիներին տնօրեններին տրված ինքնակառավարումն ի վնաս մեզ է գործում:

- Եթե պետհամալսարանն ավարտածը ստացել է մանկավարժի որակավորում, նա չի կարող զրկվել եւ իրեն հասանելի դասաժամերը զիջել ուսումնարան ավարտածին: Նմանատիպ դեպքերը կարիք ունեն պարզաբանման եւ ստուգման: Բողոք-դիմում ստանալուն պես դրանք անպայման կուսումնասիրվեն:

- Ուսուցիչներն ու ծնողները դժգոհում են հատկապես դասարանների ծանրաբեռնվածությունից: Շատ դպրոցներում մեկ դասարանի աշակերտների թիվը հասնում է 45-ի, ինչը, նրանց համոզմամբ, մեծապես վնասում է ուսուցման մակարդակին:

- Խնդիրն այն է, որ անցնելով նոր կրթակարգի, դպրոցներում դեռեւս պահպանվում են գիտելիքի ստուգման եւ մատուցման նախկին մեթոդները: Մինչդեռ նոր կրթակարգով ենթադրվում է բոլորովին նոր ինտերակտիվ մեթոդների կիրառում: Մի քանի աշակերտի ավելացումն, ըստ իս, էական խնդիր չպետք է դառնա, կարեւորը գիտելիք մատուցելու ու յուրացնելու որակն է: Մ. Նահանգներում ինձ անչափ զարմացրեց, որ մեղադրում են ոչ թե չսովորող աշակերտին, այլ բավարար գիտելիք չտվող ուսուցչին: Ամենագլխավորը կրթության որակն է, դրանից ավելի կարեւոր բան դպրոցում գոյություն չունի: Ինչ խոսք, հիշ թվով աշակերտների հետ աշխատելն ավելի հեշտ է: Շատ գործոններ կան, որոնք գիտելիքների մատուցման եւ գնահատման համակարգում դեռեւս գոյություն ունեն, բայց նոր կրթակարգի պայմաններում դրանք որեւէ էական նշանակություն չեն ունենա:

- Գնահատման համակարգում կատարվելիք փոփոխությունները եւս մտահոգում են մեր հանրությանը: Ձեր կարծիքով, դրանք կապահովե՞ն գնահատման օբյեկտիվ համակարգ, կվերացնե՞ն դպրոցական կոռուպցիան:

- Քննարկում ենք գնահատման մի քանի մոդելներ, ձգտում ենք կիրառել այնպիսի մոդել, որը թույլ կտա աշակերտի գիտելիքը ստուգել առավելագույն չափով: Հիմա ընդունելության քննությունների ժամանակ ընդգրկվում են 5-8, տեստերում՝ 6-8 հարցեր: Լավ պարապած աշակերտը կարող է 1-2 ժամում ավարտել, իսկ թույլերին սովորաբար օգնում են: Ի՞նչ է նախատեսվում նոր մեթոդով: Ելնելով մերձբալթյան երկրների փորձից կարելի է սահմանել գնահատման 100 միավոր, նույնքան էլ առաջադրանքներ են տրվում, սակայն չի պարտադրվում 3 ժամում դրանք ամբողջությամբ կատարել: Եթե աշակերտը կատարում է 50-60-ը, այդքան էլ միավոր է ստանում: Այս պարագայում դժվար թե հնարավոր լինի աշակերտին մեծ քանակությամբ հարցեր հուշել ու բարձրացնել միավորը: Ենթադրում եմ, որ նոր մեխանիզմների միջոցով շատ ճեղքեր կփակվեն: Սա մերձբալթյան երկրների տարբերակն է, որը միանգամայն կիրառելի է մեզանում: Մերձբալթյան երկրներում վերջին 2 տարիներին անցած երկրի առաջին դեմքերի երեխաները չեն հաղթահարել անհրաժեշտ միավորը:

- Այդ դեպքում ինչպե՞ս համոզել աշակերտին ու ծնողին, որ գնահատականն օբյեկտիվ է:

- Ամենից առաջ համակարգը պետք է օբյեկտիվ լինի, դրա նկատմամբ հավաս պետք է ստեղծել:

Ավարտական քննությունների ժամանակ յուրաքանչյուր աշակերտ կարող է ընտրել 3, կամ միանգամից 6 ավարտական քննություն, հումանիտար կամ բնագիտական մասնագիտությունների համար: Միաժամանակ յուրաքանչյուր բուհ սահմանում է պետական նպաստների եւ վճարովի համակարգի ներքին շեմերը: Դիմորդին մնում է իր նախասիրությունների եւ սահմանված շեմերի համաձայն տեղադրել իր ավարտական քննությունների հավաքական միավորը:

Գնահատման այս նոր համակարգն առաջին անգամ կկիրառվի մյուս տարի, որից հետո 2006-2007 թթ. ուս. տարում ամբողջապես կանցնենք գնահատման նոր մոդելին: Նշածս համակարգն այսօր շատ երկրներում է գործում, դպրոցական ավարտական եւ բուհական ընդունելությունները մեկտեղվում են գրեթե բոլոր երկրներում, ինչը մեծապես բարձրացնում է դպրոցի դերն ու պատասխանատվությունը: Քննությունները դպրոցներն անցկացնում են գիտելիքների գնահատման ու տեսավորման կենտրոնի հետ:

- Իսկ այս տարվա բուհական ընդունելության քննություններում որեւէ փոփոխություն նախատեսվո՞ւմ է:

- Որոշակի փոփոխություններ կան քննությունների անցկացման կարգում: Այսպես, մաթեմատիկայի 2 տարբեր քննությունները հանվել են եւ փոխարինվել մեկ ընդհանուր քննությամբ, նույնը վերաբերում է նաեւ ֆիզիկային ու հիմիային, կունենանք մեկ ամբողջական հանձնաժողով: Երեւանի ճարտարագիտական, գյուղատնտեսական եւ ճարտարապետաշինարարական համալսարաններում դպրոցից տեղափոխվող ֆիզիկայի փոխարեն մտցվել է նույն առարկայից քննություն: Հավանաբար այս տարի եւս կպահպանենք մեղադրելի դեղը: Իսկ կոնսերվատորիայում եւ գեղարվեստի բուհերում միջազգային մրցույթների դափնեկիրների առավելությունները պահպանելու հարցը քննարկման փուլում է, առաջարկություն չենք կրելու:

- Դասագրքերի հարցը թերեւս ամենահրատապն է, որովհետեւ դասագիրք հրատարակելն այսօր դարձել է խաղ ու պար՝ պատուհաս դառնալով ծնողների գլխին, որոնցից ամեն տարի պահանջվում է ռուսաց լեզվի կամ մեկ այլ առարկայի նոր հրատարակված դասագիրքը գնել, որն իբր ավելի մատչելի է եղածից: Գրեթե բոլոր դասագրքերը խրթին են, անհետաքրքիր ու անհրապույր, հաճախ նույնիսկ անօգուտ: Միջին դասարանների հայ գրականության եւ 9-10-րդ դասարանների ոճաբանության դասագրքերն արդեն ամեն ինչ ասում են: Ի՞նչ կասեք այս մասին:

- Ինչպես վերեւում նշեցի, նոր կրթակարգի հետ նոր դասագրքեր ենք ունենալու, դրանք ստեղծելիս հաշվի կառնենք բոլոր դիտողությունները, վերջին ժամանակահատվածում մամուլում հրապարակված նյութերը, որոնք վերաբերում են ինչպես հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության, այնպես էլ մյուս առարկաների դասագրքերին: Հուսով եմ, որ նոր դասագրքերի հեղինակները նկատի կունենան առկա թերությունները: Այս հարցերին զգալի ուշադրություն ենք դարձնելու: Արդեն իսկ «Կրթական բարեփոխումների կենտրոնը» վերակազմավորել ենք «Կրթության ազգային ինստիտուտի», ինչը ենթադրում է, որ մեր մանկավարժության, կրթության համակարգի ստեղծման եւ զարգացման գործում կիրառելու ենք թե՛ մեր գիտության վերջին նվաճումները, թե՛ զարգացած երկրների փորձը:

- Շատերիս հուզող հաջորդ հարցը հայոց լեզվին է առնչվում, քանի որ նրա հանդեպ եղած անփույթ վերաբերմունքն օրեցօր ավելի գերիշխող է դառնում: Պետական պատշգամբից մինչեւ դպրոցական աշակերտը խոսում են ոչ գրական, աղխաիկ հայերենով, իսկ ամենասոսկալին այն է, որ այդ երեւույթի դեմն առնելու ոչ մի քայլ չի ձեռնարկվում: Փոխարենն ի հայտ են գալիս օտար լեզուների դասավանդումը խրախուսող տարբեր ծրագրեր՝ լուրջ սպառնալիք ստեղծելով մեր լեզվի զարգացման համար: Ինչպե՞ս եք պատկերացնում այս խնդրի լուծումը:

- Չեմ կարծում, որ հայերենն անպատշաճ է, թեպետ խնդիրներ կան: Ձեր ասածի մեջ ռացիոնալ միտք կա: Այո, մենք կամենում ենք, որ հայերենի ուսուցումն ավելի խորացված լինի: Շատ երկրների կրթակարգերում մայրենի լեզուն չի առանձնացվում, բայց մենք հայոց լեզուն եւ գրականությունը առանձնացրել ենք, ինչն արդեն լուրջ մոտեցում է: Կրթակարգում սահմանված 9 ուսումնական բնագավառներից մեկը հայերենն է, այլ երկրների կրթակարգերում մայրենի լեզուն միացված է օտար լեզուներին: Մենք ընդգծելու ենք հայերենի դասավանդման անհրաժեշտությունը՝ ապահովելով անհրաժեշտ դասաժամեր ուսումնառության բոլոր տարիներին: Իսկ հայերենի ուսուցիչների խրախուսման մասին պետք է մտածել: Մասնագիտական մրցույթների կազմակերպումն անհրաժեշտ է: Մենք ի վիճակի ենք դա անելու:

Նախանձախնդիր է Մայր աթոռ սուրբ Էջմիածինը եւ «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման համար հայտարարել է 5 հազար դոլար մրցանակ, որը տարեվերջին կտրվի լավագույն ուսուցիչներին: Կարծում եմ, որ Վեհափառ հայրապետի հետ հովանավորներ կգտնենք նաեւ հայոց լեզվի լավագույն դասավանդման համար՝ ավելի ծանրակշիռ մոտեցում ցուցաբերելով հայոց լեզվի ուսուցիչներին: Կգտնենք խրախուսման նոր ձեւեր, որոնք թույլ կտան մեր լեզվի դրվածքն ապահովել՝ դասագրքերն ամբողջությամբ թարմացնելով: Համոզված եմ, որ ընթացիկ տարին կդառնա ուսուցչի պատվի ու արժանապատվության, մասնագիտական կարողությունների բարձրացման տարի:

- Սահմանամերձ գյուղերում այսօր ուսուցիչների նկատելի պակաս կա, ի՞նչ քայլեր եք նախատեսում:

- Այս տարի առաջին անգամ մանկավարժական համալսարանում կհայտարարենք նպատակային ընդունելություն: Սահմանամերձ գյուղերի յուրաքանչյուր շրջանավարտ կարող է հավակնել այդ տեղին: Մրցույթը կանցկացվի միմիայն այդ գյուղերի շրջանավարտների միջեւ, ավարտելուց հետո հայրենի գյուղի դպրոցում դասավանդելու պայմանով:

- Իսկ եթե չվերադառնա՞ն:

- Այդ դեպքում ստիպված կլինեն վճարել ուսման վարձը, որը պետությունն էր հոգացել: Ես լավատեսորեն եմ նայում այս խնդրին, որովհետեւ ուսանողների հետ հանդիպելով ավելի ու ավելի եմ համոզվում, որ նրանց մեջ հայրենասիրությունն ուժեղ է: Շատերն են ոգեւորվում սահմանամերձ գյուղեր մեկնելու մտքից: Այս տարի ուղղակի պարտավոր ենք այդ թափուր տեղերը լրացնելու, այլապես ստացվում է, որ անցնում ենք միջազգային չափանիշներին համապատասխան կրթության, բայց գյուղական շատ դպրոցներում դասավանդող ուսուցիչներ չունենք:

Հաջորդ բարդ խնդիրն այն է, որ սահմանամերձ ու հեռավոր բնակավայրերում դասավանդող 12 հազար ուսուցիչներ միջնակարգ կրթություն ունեն: Սա նույնպես կրթության որակի մասին չի խոսում:

Ունենք նախագծեր բուհական, հետբուհական, միջին մասնագիտական եւ նախադպրոցական կրթության համար: Դրվում են դրանց զարգացման օրենսդրական հիմքերը, իսկ ամենակարեւորը՝ կրթական բարեփոխումները ֆինանսապես ապահովված են: Հանրակրթության համար ունենք 19 մլն դոլարի վարկային ծրագիր, գումարած 1 մլն 200 հազար համաֆինանսավորումը, բարձրագույն կրթության համար կունենանք 26 մլն դոլարի ֆինանսավորում, իսկ միջին մասնագիտական կրթության վերափոխումների համար ունենք 2,5 մլն եվրո: Կրթությունը մեր երկրի եզակի բնագավառներից է, որի զարգացումը ֆինանսապես ապահովված է: Առաջիկա 4-10 տարիների ընթացքում կիրականացնենք լուրջ բարեփոխումներ:

Մեր կրթական համակարգը կդառնա որակյալ եւ մրցունակ ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում:

Հարցազրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ԱԶԳ

ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունից մեկուսացածներ

Կոտայքի մարզի Բուժական գյուղում Աղխաության ընտանեկան նպաստ (ԱԸՆ) է ստանում 30 ընտանիք: Բուժականցիները բոլոր նպաստառուներին չեն ճանաչում, բայց գյուղի ամենաբազմազավակ՝ 5 անչափահաս երեխա ունեցող Բյուրեղ Գեւորգյանի ընտանիքին մատնացույց անելով գտնում են, որ անարդարություն է կատարվում: Այդ հարցում մեղադրում են համայնքապետին՝ ասելով, որ Բյուրեղ Գեւորգյանի ընտանիքի նպաստը դադարեցվել է միայն այն պատճառով, որ տեղական ինքնակառավարման ընտրություններում համայնքապետ Մանվել Դավթյանի կողմնակիցների թվում չեն եղել: Եվ տալիս են անուններ, որոնք նույն «հիմունքներով» զրկվել են նպաստից: Միաժամանակ, մատնացույց են անում նույն գյուղից Վաչիկ Գասպարյանի ընտանիքին, որը նրանց ասելով, անհամեմատ բարվոք վիճակում է, բայց նպաստ ստանում է, որովհետեւ համայնքապետի բարեկամն է:

Բյուրեղ Գեւորգյանի 5 երեխաներից ավագի՝ 15-ամյա Սամվելի միակ երազանքը դպրոցն ավարտելն է: «Աշխատանք չկա, որ կարողանանք աշխատել երեխաներին պահել: Հող ունենք, ցիտրուս է՝ ցանում ենք, բայց ջրի մեջ է, կրծողների դեմ չենք կարողանում պայքարել: Բուժումներով մի փիչ բերք ստանում ենք՝ կաղամբ, խնձոր, կարտոֆիլ, դրա մի մասը տանում ենք շուկա: Երեխեքը ոչ կոշիկ ունեն, ոչ հագուստ, անցած տարի անվճար դասագիրք էլ չհասավ: Գարնանը օրեր են եղել, որ ալյուր չենք ունեցել, սիրտդ պարսք ենք վերցրել: Մարդիկ հինգ երեխայի դեմքում անհնար են համարում նպաստ չստանալը: Բայց մեզ էլ ասում են, եթե հինգ երեխա ես ունեցել, ուրեմն հնարավորություն էլ ունես պահելու»,-ընտանիքի կարիքավորության մասին պատմում է տիկին Բյուրեղը:

Ընտանիքին տրվող նպաստը դադարեցրել են մեկ տարի առաջ: Թե ինչու՝ Բյուրեղն ու ամուսինը՝ Մխիթարը, չգիտեն եւ զանազան ենթադրություններ են անում՝ «գյուղապետարանը տեղեկանքի մեջ չէր նշել, որ մենք կով ունենք...», «պատճառաբանում են, որ մորդ հարկի տակ ես ապրում» եւ այլն: Եղվարդի սոցիալական ծառայությունից մեր հարցումին պատասխանեցին, որ սոցապ նախարարության սոցիալական մոնիտորինգի վարչության հսկողության բաժինը սուղգումներ էր կատարել տարածքում եւ գտնելով, որ իրականությանը չեն համապատասխանում ընտանիքի կազմի եւ սեփականության մասին տվյալները, որի արդյունքում կատարվել է 92 հազար դրամի սխալ վճարում, դադարեցրել էր նրանց նպաստը: «Գեւորգյան Մխիթարի ընտանիքն ապրում է մոր տանը, վարում է համատեղ տնտեսություն, որը 2002թ.-ին ուներ 3 կով, 2 հորթ, սակայն 23.01.02թ.-ի տեղեկանքում նշված չեն», -պատճառաբանել էին նրանք:

«Մենք կով չունենք, մի տարի առաջ սկեսուրս էր տվել: Գյուղապետարանը տեղեկանքի մեջ չէր նշել, որովհետեւ փաստացի մերը չէր այն: Սկեսուրս մյուս տղայի հետ է ապրում, ոչ թե մեր, պարզապես տունը սկեսրայրիս անունով էր, որը մահացել է եւ մենք էլ չենք փոխել»: Այս ամենը Բյուրեղ եւ Սեխակ Գեւորգյանները պատմում էին Եղվարդի սոցիալական ծառայության պետ Սերգեյ Ասիրյանի ներկայությամբ, որին չէին ճանաչում: Ծառայության պետը ջանում էր ճշտել ընտանիքի հավելյալ եկամուտները՝ սկեսուրի նվիրաբերած կովից բացի, ուրիշ ինչ ունեն, որ թափթրել են սոցիալական ծառայությունից: Օրինակ, որքան եկամուտ կարող է ապահովել դռան ետեւում դրված էլեկտրական սղոցը, որը, եթե մեր անակնկալ այցը չլիներ, հազիվ թե դռան ետեւում դրված լիներ կամ բակում կանգնած բեռնատարը, որի պիտանիության կամ ոչ պիտանիության մասին չխոսվեց:

Մինչեւ սոցծառայության պետի հետ Բուժական այցելելը, մեկ անգամ արդեն եղել էինք նրանց, ինչպես նաեւ նույն գյուղի բնակիչ նպաստառու Վաչագան Գասպարյանի տանը եւ զրուցել ընտանիքի ավագի՝ 84-ամյա Աշխեն մայրիկի հետ: Համագյուղացիների կարծիքով նրանց ընտանիքը նպաստառու չէր կարող համարվել, քանի որ 7 կով ունեն, 2400մ տնամերձ, նաեւ սեփականաշնորհված հողամաս: Իսկ որ ընտանիքը սոցիալական չափորոշիչների պահանջներին հակառակ նպաստ է ստանում, բուժականցիներից շատերը բացատրեցին նրանով, որ Վաչիկը գյուղապետի հորեղբոր տղան է: «Վեց շունչ ենք: Սոված չենք մնացել դեռեւս, ծայրը ծայրին յոլա ենք տանում»,-չգիտես ինչու մորը՝ Աշխեն մայրիկին ընտանիքի կազմից դուրս դնելով ասաց Վ. Գասպարյանը, այն դեպքում, երբ ընտանիքը, իբրեւ նպաստառու, հաշվառված է մոր անունով: Նա հայտնեց, որ նպաստը դադարեցրել են երկու ամիս առաջ: «Չգիտեմ ինչու կտրեցին, գնացել եմ սոցիալական ծառայություն, համակարգիչով իմ տվյալները նայել են, ասել են՝ քեզ նպաստ հասնում է: Պատճառաբանել են, թե «չեղել» է եղել՝ կշտկվի, հիմա սպասում եմ»,- ամիսներ առաջ Աղխաության ընտանեկան նպաստից զրկվելու պատճառների մասին պատմեց Վ. Գասպարյանը:

«2003թ. մայիսին ներկայացված տեղեկանքով ընտանիքն ունի հող եւ 1 կով: Նշված տվյալներով ընտանիքն ընդգրկվել է ԱԸՆ-ի համակարգում եւ ստանում է 12 հազար դրամ նպաստ»,-մեր հարցին պատասխանել էր Եղվարդի տարածքային սոցիալական ծառայության պետ Ս. Ասիրյանը, որից պարզաբանումներ էինք խնդրել երկու ընտանիքների մասին: Այժմ նա նույն ջանադրությամբ փորձում էր պարզել այս ընտանիքի իրական կարիքավորությունը: «Հողամասում բանջարեղեն ենք ցանում, անտառից ենք որոշ բաներ բերում, այգում խնձոր ունենք, շուկա չենք տանում, հազիվ ենք հասցնում: Առաջին հերթին երեխաներին ապահովում ենք սնունդով, հետո հագուստով, գրքերի համար չենք հասցնում վճարել: Ձմեռը մեզ մոտ շատ խստաշունչ է, օրինակ, այս տարի վառելափայտ չունենք, չգիտեմ ոնց կլինի: Ուստի եմ անտառից փայտը բերում: Ես կուզենայի, որ պետականորեն կազմակերպվեր վաճառքը, մատչելի լիներ, կարողանայինք գնել: Հիմա այնպիսի գներ են ասում, որ հնարավոր չէ»,-շարունակում էր ընտանիքի կարիքավորությունը նկարագրել չորս անչափահաս երեխաների հայր Վ. Գասպարյանը:

Անասնաբուծականի մասին նա գերադասեց լռել, սակայն մեր հարցադրումներին տեղի տալով ասաց. «Երկու կով է մնացել, երկու հորթ, կովերից երկուսը գնացին անտառ ու էլ ետ չեկան: «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենան, որ հորս էին տվել որպես պատերազմի հաշմանդամի, ՄՈՒՀ-ն դուրս է գրել»:

-Երկու կով չի, հինգ հատ է,- հորն ուղղում էր դպրոցահասակ որդին:

«Բացարձակ սուտ է, որ հարեւանիս երկու կովը կորել է»,- Վ. Գասպարյանի դռանը խմբված մեկ տասնյակ բուժականցիների միջից զայրացած բացականչում էր Հայկարամ Մելոյանը՝ ենթադրելով, որ մենք նրանց այցելել ենք նպաստը վերականգնելու համար: Համագյուղացիները պնդում էին, որ նույն «դուրս գրված» մեքենայով է Վաչիկը բերքը շուկա տանում:

Այս երկու ընտանիքների ունեցվածքի մասին տեղեկանքները տվել է համայնքապետը եւ հետաքրքիր էր, թե ինչպես էր թափթրել Վաչիկ Գասպարյանի մնացյալ 6 գլուխ խոշոր եղջերավոր անասունները: Ի պատասխան Բուժականի համայնքապետ Մանվել Դավթյանը ծանուցեց ծխամատյանի գրառումներին: ***«Գասպարյան Աշխեն՝ յոթ շունչ, ունի 1 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 0,27 հա տնամերձ հողամաս, 0,37 հա անջրդի, 0,36 հա ջրովի հողատարածք, չորս անչափահաս երեխաներ՝ ծնված 94, 95, 97 եւ 98թթ.ին»:*** Համայնքապետին հիշեցրինք, որ Վ. Գասպարյանի ընտանիքը 7 կով ունի, որի մասին իրենք ասել են, սակայն ծխամատյանում հաշվառված չէ: Մ. Դավթյանի ասելով, կովերը պատկանում են Վ. Գասպարյանի հրոջը: **Համայնքապետարանի քարտուղարուհին թերթում է ծխամատյանը եւ մյուս էջում ընթերցում. «Գասպարյան Եմմա. յոթ գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից չորսը՝ կովեր, մեկը՝ երինջ, երկու հորթ, երկու ոչխար, հինգ թռչուն»:**

Համայնքապետին խնդրեցինք մեկնաբանել, թե ինչպես են Վաչագան Գասպարյանի ընտանիքին պատկանող 6 գլուխ խոշոր եղջերավոր անասունները հաշվառվել ուրիշի անունով: «Գասպարյան Աշխենը ծխամատյանում գրանցված է որպես առանձին ծուխ, բայց քանի որ մի հարկի տակ են ապրում՝ մենք հաշվարկում ենք ընդհանուր եկամուտները, բայց նրանք ասում են, որ իրենց աղջիկն առանձին ծուխ է: Յոթ անասունից վեցը գրանցված է Եմմայի ու նրա ամուսնու անունով, իսկ մեկը հիմնական ծխի տիրոջ անունով: Նույն հարկի տակ ապրող մարդկանց, որոնք առանձին ծուխ են համարվում, մենք չենք կարող ասել, որ իր ունեցվածքը գրանցի իր ծնողի անունով»:

Նշենք, որ Վ. Գասպարյանի ընտանիքում ոչ ոք չասաց, թե իրենց հրոջ հետ նույն հարկի տակ են ապրում: Ավելին, որպես նպաստառու ընտանիք դիտել են այն կազմով, որոնք փաստացի ապրում են այդ տանը: Մխիթարի ընտանիքի համար էլ գրանցված է մեկ կով, այն դեպքում երբ նրանք պնդում են, որ իրենք չունեին, իր մայրն է տվել օգտվելու համար, իսկ մայրն առանձին ծուխ է եւ կովը նրա սեփականությունն է: Սակայն, նպաստը դադարեցրել էին՝ նրանց չհամարելով առանձին ծուխ եւ մի ընտանիքին պատկանող ունեցվածքը վերագրել երկուսին: Աշխեն Գասպարյանի ընտանիքի դեպքում արվել էր ճիշտ հակառակը՝ նրանց ունեցվածքը հաշվառել էին աղջկա ընտանիքի անունով: Այսինքն, երկու ընտանիքների կարիքավորությունը գնահատելիս միանգամայն տարբեր մոտեցում էր ցուցաբերվել:

«Այցելել եմ Մխիկենց տուն, տեսել եմ 1 կով, գրանցել եմ, Աշխենենց նույնպես այցելել եմ: Նա ասել է, մեկ կովը իմն ու իմ տղայինս է, մյուսները՝ աղջկանս: Վերջինս նույնպես հաստատել է, որ դրանք իր սեփականությունն են՝ ես էլ այդպես եմ գրանցել: Մխիթարի մայրը չի եկել հաստատել, որ դա իր սեփականությունն է»,- «հիմնավորում» էր համայնքապետը:

Գյուղապետարանի քարտուղարուհին կարեկցանքով էր խոսում ***Մխիթար Գեւորգյանի ընտանիքի մասին. «Միայն երկու հողաբաժին ունի: Դույլը ծեռին հարեւաններից ալյուր է խնդրում, օրվա հաց թխելու համար, ապրելու ոչ մի հնարավորություն չունեն: Երեխաները ոտաբոբիկ, տկլոր, անկոշիկ, մի խոսքով, սնանկ, անվճարունակ վիճակում են»:***

«Մեր այցելած ընտանիքներից երկուսն էլ խիստ կարիքավոր էին, անհրաժեշտություն կար նպաստ տրամադրելու»,- երկու ընտանիքների կարիքավորության վերաբերյալ իր տպավորությունն արտահայտեց Կոտայքի մարզի Եղվարդի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ Սերգեյ Ասիրյանը: Մեր հարցին, թե ինչով եք բացատրում այն հանգամանքը, որ նրանց հայտարարագրված ունեցվածքը տարբեր էր իրական վիճակից, սոցիալական ծառայության պետը պատասխանեց. «Այսօր ամենուրեք քաղաքացիները կեղծում են իրենց իրական ունեցվածքի տվյալները, որպեսզի կարիքավորությունը լրացնեն մի փոքր նպաստով: Գյուղապետարանը նրանց սոցիալ-տնտեսական վիճակի մասին տալիս է, որ տվյալ ընտանիքն ունի մեկ կով կամ դա եղբորն է, կամ մեկ ուրիշինը եւ շատ դժվար է հակառակն ապացուցել: Պետք է գնաս տեղում փաստացի ստուգես եւ ապացուցես»:

Մեր հարցին «ի՞նչ պետք է անի սոցծառայությունը, երբ ընտանիքը թափթրել է իրական եկամուտները»,- ծառայության պետը պատասխանեց, որ ճշված տվյալները մնցվում են համակարգիչ եւ ընտանիքը մեկ տարով զրկվում է նպաստից: Այնուհետեւ սոցծառայությունը դիմում է դատարան՝ բոլոր այն ամիսների գումարը, որը նա իրավունք չուներ ստանալու, ետ գանձելու նպատակով: Պրն. Ասիրյանը միաժամանակ նշեց, որ Հայաստանում չկա նման պրակտիկա, որ սոցիալական ծառայությունը դիմի դատարան գումարը գանձելու համար: «Օրենքը թույլ տալիս է դիմել, սակայն սոցծառայության ֆինանսական նեղ վիճակը թույլ չի տալիս, հայցադիմումի համար անգամ գումար չկա»:

Հնարավոր է սոցիալական ծառայությունները նման պրակտիկա չեն որդեգրել, սակայն նույն Կոտայքի մարզում ՀՀ գլխավոր դատախազությունը մեկ տարի առաջ քրեական գործ էր հարուցել Աբովյանի վարչատարածքի մի շարք համայնքապետերի դեմ՝ նպաստների համակարգում թույլ տրված չարաշահումների համար: Դրանից առաջ քրեական գործ էր հարուցվել Գեղարքունիքի մարզի Վարդենիսի վարչատարածքի համայնքապետերի դեմ, որոնցից երկուսը դատապարտվել են չարաշահումների համար:

ՍԱՍՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տես նաեւ էջ 9

Աղխաության ընտանեկան նպաստ յուրայիններին

Բուժականի բնակիչ Վաչագան Գասպարյանն ասում է, որ 2 կով ունեն, 2 հորթ, իսկ որդին ուղղում է հորը «2 կով չի, 5 հատ է»:

Բուժականի համայնքապետ Մանվել Դավթյանն ասում է, որ Վ. Գասպարյանի գրքում կարված 7 կովերից միայն մեկն է նրանցը, մնացյալը հրոջն են:

Տեսուչներն աղքատներին հայտնաբերելն իրենց խնդիրը չեն համարում

Աբովյանի վարչատարածքի Ակունք գյուղում բնակիչներին խնդրեցինք մատնացույց անել գյուղի ամենաաղքատներին: Մատնանշեցին երեք ընտանիք, որոնց հետ այնքան էլ համախոհ չէր Ակունքի համայնքապետը եւ իր հերթին թվարկեց երեք այլ ընտանիք, որոնք նրա կարծիքով ավելի աղքատ են: Այնուամենայնիվ, այս ընտանիքներն աղքատ էին, սակայն նրանցից միայն մեկն էր նպաստառու եւ միայն այն պատճառով, որ նրանց ամուսնությունը գրանցված չէր եւ կինը միայնակ մոր կարգավիճակ ուներ: Այս երեւույթը միայն Ակունքին չէր բնորոշ, որպես կանոն համայնքի ամենաաղքատ ընտանիքները ներառված չեն Աղքատության ընտանեկան նպաստի համակարգում (ԱԸՆ): Միայն Զրաբեր գյուղից Օսիպյանների ընտանիքին նպաստառու չհամարելը, որոնցից ավելի կարիքավորի դժվար է պատկերացնել, բավարար է նման պնդում անելու համար:

Նման դեպքերում բնակչությունը հիմնականում մեղադրում է համայնքապետերին եւ վերջիններս էլ դժգոհ չեն, որ համայնքի բնակչությունը նպաստ նշանակելու հարցում իրենց է համարում հիմնական դերակատարը: Չէ՞ որ բոլոր ընտրությունների, հատկապես տեղական ինքնակառավարման ընտրությունների ժամանակ այդ հանգամանքը կարեւոր դերակատարություն ունի: Դա էր պատճառը, որ վերացվեց առավել անապահով ընտանիքներին նպաստառուների ցուցակում ընդգրկելու համայնքին տրված 5% քվոտան, քանի որ յուրաքանչյուր համայնքապետ ներկայացնում էր միայն իրեն ձայն տվողներին: Ներկայումս համայնքի աղքատներին հայտնաբերելու պարտավորվածությունը փոխանցվել է միայն տեսուչներին, սակայն կյանքը ցույց է տալիս, որ նրանք այդպիսի պարտավորվածություն իրականում չեն սանձնել:

«Եթե ասենք, որ գյուղական բնակավայրերում բոլոր կարիքավորներն են ուշադրության կենտրոնում, ճիշտ չի լինի: Երբեմն, իրոք, բացարձակ կարիքավոր ընտանիքը նպաստ չի սանում: Նա անհրաժեշտ միավորը չի հավաքում»,- ասաց Կոտայքի մարզի Աբովյանի տարածքային սոցիալական ծառայության պետ Արտավազդ Ստեփանյանը: Պրն. Ստեփանյանը բացատրեց, որ ԱԸՆ-ն շատ նրբություններ ունի, եւ ամենափոքր դեպքը կարող է ազդել ընտանիքի կարիքավորության աստիճանի վրա: Իր հերթին բերեց օրինակներ. ծանր վիճակում գտնվող ընտանիք է, ապրում են կիսանկուղային, բետոնե շինության մեջ: Ընտանիքի գլխավորը զբաղվում է սեզոնային անասնապահությամբ եւ վարձատրվում է, սակայն նրա վաստակի մասին ոչ մեկը տեղեկանք չի կարող տալ եւ, եթե այդ գումարը մուտքագրեն, կզրկվեն նպաստից: «Բայց ո՞նց բացատրեմ, որ նրանք ամենառեալ սպառողներն են»,- ավելացրեց ծառայության պետը:

Պրն. Ստեփանյանը գտնում է, որ անապահովության սահմանային միավորի չափանիշը բավարարում է աշխատանքը կազմակերպելու համար, բայց միակ ճիշտ տարբերակը չի, որովհետեւ շատ աղքատ ընտանիքների միավորները չեն բավարարում եւ զրկվում են նպաստից, իսկ կան ապահովված ընտանիքներ, որոնք ապահովում են սահմանված միավորը: «Մենք ի՞նչ ճանապարհով պետք է ապացուցենք, որ այդ ընտանիքն ապահովված է: *Բազմաթիվ պաշտոնական տեղեկանքներ ենք ստանում, կարո՞ղ ենք պնդել, որ բոլոր այն տեղեկանքները, որոնց տակ կան իրավաբանական անձանց կնիքներ ու ստորագրություններ, բացարձակ համապատասխանում են իրականությանը: Իհարկե՝ ոչ»,- հաստատեց Աբովյանի սոցծառայության պետը:*

«Եթե հասարակության մեջ կա այդպիսի մտածելակերպ, որ սոցծառայության ոլորտում կա կոռուպցիա, ես դա կարող եմ ընդունել եւ չընդունել, որովհետեւ միանշանակ բոլորի համար պատասխան տալ չեմ կարող»,- ասաց նա, ավելացնելով, որ ձգտել են իրենց մոտ բացառել այդ երեւույթը: Սակայն ենթադրում է, որ նման քայլ կատարելու հնարավորություն կա, որովհետեւ ընդհանուր աղքատություն կա, բայց ի վիճակի չեն բոլորին ապահովել միանվագ ընտանեկան նպաստով կամ դրամական օգնությամբ: Ավելացնենք եւս մի կարեւոր հանգամանք վերահսկողական մեխանիզմներ չկան, եղածն էլ գործող չէ:

Նա այդպիսի տեղեկություն ունի, գործարքի մեջ է մտնում քաղաքացու հետ եւ գումարը կիսում է»,- շեշտեց պրն Ստեփանյանը:

Ծառայության պետը գտնում է, որ ճիշտ կլինի փաստագրումից հետո սոցծառայությունները հիմնավոր սուղպայքեր կատարեն տարածքներում: «Իսկ դուք պահանջեք, որ Զրվեժից մինչեւ Գեղարդ գյուղը մի տեսուչ գնա սուղպայքի: Աբովյանից մինչեւ Գեղարդ 47 կմ է, երկու շաբաթը չի բավարարի դրա համար, դա ֆինանսական հնարավորությունների հետ է կապված: Ինչո՞վ գնան, պետք է համայնքապետերին խնդրեն, որ մեքենա տրամադրի: Այդ ժամանակ էլ կախվածությունն է մեծանում համայնքապետից, անպայման մեկի համար կդիմի՝ բարեկամի կամ ձայն տվողի»:

«Անձամբ գնալ՝ ուսումնասիրելը ճիշտ է: Սակայն այսօր տեսուչին տրված անձամբ սուղպայքը, տեղում ճշտելու իրավունքը ծեւական բնույթ է կրում: Նրանք ի վիճակի չեն դա անելու, որովհետեւ մեծ գումարների հետ է կապված»,- ասում է Կոտայքի մարզի Եղվարդի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ Սերգեյ Ասիրյանը: Նրա կարծիքով աղքատության նշանակման բալային համակարգն արդարացված չէ եւ ճիշտն այն կլինի, որ սոցծառայության աշխատողները գնան համայնք, հավաքեն ժողովրդին ու ղեկավարությանը, միասին որոշեն ամենակարիքավորներին ու գումարն էլ բաշխեն ըստ այդմ: «Թող առաջնորդվեն իրենց տեսածով»,- ասում է Ս. Ասիրյանը:

Այսպես. փաստագրումն ավարտելուց հետո սոցիալական ծառայության տեսուչը 25 օրյա ժամկետում պետք է մանրակրկիտ ուսումնասիրի եւ առաջարկություն ներկայացնի քաղաքացուն նպաստ նշանակելու կամ մերժելու մասին: Սոցիալական ծառայության աշխատակիցներից ոչ ոք չբացառեց, որ գյուղական տարածքում եկամուտ դիտվող անասնագլխաքանակի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը ճշտելիս *տեսուչը կարող է տեսնել, որ անասնագլխաքանակը ճիշտ չի նշված, բայց ընտանիքն էլ աղքատ ընտանիք է, գործարքի մեջ մտնի տվյալ ընտանիքի հետ եւ այլ փակի չգրանցված տվյալների վրա:* Կամ ընտանիքը փաստագրվել է, սակայն ամուսինը Ռուսաստանում փող է աշխատում, կինն էլ այստեղ նպաստ է սանում եւ հարեւաններն այդ տեսնում են:

Նպաստ նշանակելու իրավունքը վերապահված է սոցծառայություններին, որից հետո նրանց առաջարկությամբ պետական գանձապետարանից նպաստի վճարման գումարը սանում է կապի նախարարության օղակը՝ «Հայփոստ» բաժանմունքը: *Փոստատարները պարտավոր են նպաստը հասցնել նպաստառուին: Հրահանգում գրված է, եթե փոստատարը տվյալ ընտանիքի մասին սանում է անուղղակի տեղեկատվություն՝ պարտավոր է հաղորդել իր տնօրենին, վերջինս էլ՝ սոցծառայությանը: «Դա անհրամաբանական է: Ավելին, եթե* դրա համար, դա ֆինանսական հնարավորությունների հետ է կապված: Ինչո՞վ գնան, պետք է համայնքապետերին խնդրեն, որ մեքենա տրամադրի: Այդ ժամանակ էլ կախվածությունն է մեծանում համայնքապետից, անպայման մեկի համար կդիմի՝ բարեկամի կամ ձայն տվողի»:

«Անձամբ գնալ՝ ուսումնասիրելը ճիշտ է: Սակայն այսօր տեսուչին տրված անձամբ սուղպայքը, տեղում ճշտելու իրավունքը ծեւական բնույթ է կրում: Նրանք ի վիճակի չեն դա անելու, որովհետեւ մեծ գումարների հետ է կապված»,- ասում է Կոտայքի մարզի Եղվարդի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ Սերգեյ Ասիրյանը: Նրա կարծիքով աղքատության նշանակման բալային համակարգն արդարացված չէ եւ ճիշտն այն կլինի, որ սոցծառայության աշխատողները գնան համայնք, հավաքեն ժողովրդին ու ղեկավարությանը, միասին որոշեն ամենակարիքավորներին ու գումարն էլ բաշխեն ըստ այդմ: «Թող առաջնորդվեն իրենց տեսածով»,- ասում է Ս. Ասիրյանը:

Երեք մլն բնակչություն ունեցող Հայաստանի հանրապետությունն ունի 550 սոցիալական աշխատող, որից 55-ը գործակալության տնօրեններ են: Մեկ տեսուչը սպասարկում է 450-600 նպաստառու եւ միանվագ նպաստ սացող ընտանիքի: Համեմատության համար նշենք, որ Լատվիայի սոցիալական աջակցության մասին օրենքով 1000 բնակչի հաշվով պետք է լինի առնվազն 1 սոցիալական աշխատանքի մասնագետ: Իռլանդացի խորհրդականները հայաստանցի գործընկերներին հայտնել էին, որ իրենց երկրում սոցծառայության աշխատողը սպասարկում է առնվազն 30-40 կարիքավոր ընտանիքի, այսինքն՝ նա կարող է շաբաթական մեկ անգամ այցելել այդ ընտանիքին եւ ամեն ինչ տեսնել:

«Մենք սպասում ենք, որ ԱԸՆ համակարգում մշակեն այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացուն հարկադրի, թույլ չտա, շահագրգռի սոցիալական ծառայությունից չթաքցնելու իր եկամուտը»,- ասում է Ս. Ասիրյանը: Երեք մլն բնակչություն ունեցող Հայաստանի հանրապետությունն ունի 550 սոցիալական աշխատող, որից 55-ը գործակալության տնօրեններ են: Մեկ տեսուչը սպասարկում է 450-600 նպաստառու եւ միանվագ նպաստ սացող ընտանիքի: Համեմատության համար նշենք, որ Լատվիայի սոցիալական աջակցության մասին օրենքով 1000 բնակչի հաշվով պետք է լինի առնվազն 1 սոցիալական աշխատանքի մասնագետ: Իռլանդացի խորհրդականները հայաստանցի գործընկերներին հայտնել էին, որ իրենց երկրում սոցծառայության աշխատողը սպասարկում է առնվազն 30-40 կարիքավոր ընտանիքի, այսինքն՝ նա կարող է շաբաթական մեկ անգամ այցելել այդ ընտանիքին եւ ամեն ինչ տեսնել:

«Մենք սպասում ենք, որ ԱԸՆ համակարգում մշակեն այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացուն հարկադրի, թույլ չտա, շահագրգռի սոցիալական ծառայությունից չթաքցնելու իր եկամուտը»,- ասում է Ս. Ասիրյանը:

Համայնքապետերը պետությանը հասցված վնասը հատուցում են պետության բյուջեից

ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության Ֆինանսավերահսկողության գլխավոր վարչությունը 2002թ.-ին Կոտայքի մարզի 30 գյուղական համայնքներում ուսումնասիրել էր Աղքատության ընտանեկան նպաստի (ԱԸՆ) նշանակումները եւ նյութերն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, որը քննությունը հանձնել է Կոտայքի մարզի դատախազությանը: Վերջիններս քննելուց հետո կիսով կրճատել են նախարարության արձանագրած անօրինականությունները:

Քննության ընթացքում Առինջի (պետությանը պետք է փոխհատուցեր 12.2 հազար դրամ) Գեղաբենի (56.1 հազար դրամ) եւ Նոր-Գյուղի (416.9 հազար դրամ) համայնքապետները կամովին վերականգնել են վնասը: Քանի որ վնասի չափը չի հասնում 1մլն դրամի սահմանագիծը, որի դեպքում միայն քրեական պատասխանատվության խնդիր կառաջանար, դատախազությունը կարճել էր քրեական գործը եւ Աբովյանի վարչատարածքի 7 համայնքապետերից պետությանը հասցված նյութական վնասը գանձելու համար քաղ. հայցով դիմել էր ՀՀ տնտեսական դատարան: Ըստ հայցադիմումի՝ Արամուսի համայնքապետից հօգուտ պետության պետք է գանձվեր 854.4 հազար դրամ, Պտղնիի համայնքապետից՝ 313.2, Կոտայքից՝ 445.6, Գառնիից՝ 431.7, Նուռնուսից, Զառից՝ 281.8, Ծորաղբյուրի համայնքապետից՝ 296.1 դրամ:

Հայցադիմումների քննությունը ՀՀ տնտեսական դատարանում նշանակված էր հունիս ամսին: Համայնքապետները հաղաղում էին ներկայանալ դատարան, նրանց մի մասը մինչեւ դատաքննությունը եւ դատաքննության ընթացքում վճարեց պետությանը հասցված վնասը, մյուսները չէին ցանկանում ներկայանալ դատարան: Դատական նիստը մի քանի անգամ հետաձգելուց հետո նրանցից ոմանք ներկայացան եւ բացատրություններ տվեցին, իսկ մյուսները, օրինակ, Գառնիի համայնքապետը այդպես էլ չներկայացավ դատարան: Մեղադրողը՝ Կոտայքի մարզի դատախազի օգնական Արարատ Մուրադյանը, որ մեզ հետ միասին երկար սպասում էր համայնքապետերին՝ նրանց չներկայանալը բացատրեց նրանով, որ պետությունը դոտացիաները չի տրամադրել համայնքներին, որպեսզի նրանք վճարեին գումարը, «թե չէ՝ վաղուց էին վճարել»:

Քրեական գործի նյութերով, նպաստների սխալ նշանակման պատճառ են հանդիսացել՝

1. քաղաքացու ընտանիքի կազմի,
2. անասունների քանակի,
3. սեփական հողամասի մասին ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելը:

Համայնքապետերն սկզբում փորձել էին բացատրություններ փնտրել մեղադրանքը հերքելու համար, սակայն դրանք չհիմնավորված են համարվել: Հիմնավորված չեն համարվել նաեւ այն պատճառաբանությունները, որ տարվա սկզբին գրանցված են եղել անասուններ, որոնք հետո մորթվել են կամ վաճառվել, սակայն ծխամատյանում չեն արձանագրվել փոփոխությունները: Համայնքապետները միանշանակ համաձայն չեն դատախազության հետ եւ իրենց բացատրությունն են տվել. «Նրա անձնական հաշվում հաշվառված 1 կովը ծնի ժամանակ սատկել է, որը իր դիմումի համաձայն հաշվառումից հանվել է, սակայն սուգման ժամանակ հաշվի չի առնվել: Ընտանիքը կարիքավոր է»:

Արամուսի համայնքապետ Հ. Նիկողոսյանը ՀՀ գլխավոր դատախազության սուգումից հետո հավատի չէր համարել միայն երեք անձանց հետ կապված տեղեկությունները եւ դատարանին ներկայացրած առարկության մեջ նշել էր. «ՀՀ գլխավոր դատախազության սուգումների ժամանակ անտեսվել եւ հաշվի չեն առնվել մի շարք օբյեկտիվ փաստեր եւ նրանց կողմից կազմված տեղեկանքներում ոչ ճիշտ տվյալներ են արձանագրվել: «Ատոդիկի 1 կովը եւ 1 մոզին չի նշվել, այդ փաստը իրականությանը չի համապատասխանում, որովհետեւ այդ ընտանիքն ընդհանրապես անասուններ չի ունեցել եւ 2001թ.-ին ձեռք էր բերել 2 հատ հորթ, իսկ ծխամատյանում հորթերի վերաբերյալ սյունակ չլինելու հետեւանքով ճշգրիտ անասնագլխաքանակը ցույց տալու համար 2 հորթերը լրացրել են 1 կովի եւ մոզու սյունակներում»: Համայնքապետը խնդրել էր հայցը բավարարել 350 հազար դրամի չափով. «Այս չափով հայցը համարում ենք հիմնավոր եւ գումար ունենալու դեպքում հայցագումարը կմուծենք»: Դատարանը հավատի համարեց համայնքապետի բացատրությունը եւ հայցադիմումը բավարարեց մասնակի՝ 350 հազար դրամի չափով:

Զառ-ի համայնքապետը մահացել էր մինչեւ քրեական գործի քննության ավարտը եւ նոր համայնքապետ Մաթեւոս Մաթեւոսյանը պատասխանատվություն էր կրում նախորդ համայնքապետի փոխարեն: «Նախորդ համայնքապետի ժամանակ այնպես են արել, որ մարդիկ նպաստ ստանան՝ տնտեսական գրքերում ուղղում չեն կատարել: Երբ հայտնաբերեցին խախտումները՝ 624 հազար դրամ պետք է վերադարձնեիք պետությանը: Մի մասի հետ համաձայն չէինք եւ առաջարկեցինք, որ ճիշտ ենք, մյուս մասը համայնքապետարանի բյուջեից վերադարձրինք պետությանը: Նրա ասելով, Զառում կան բավականին շատ մարդիկ, որոնց նպաստ կտար: «Հիմա մի հորթը, որ իրենից եկամուտ չի ներկայացնում՝ 30-40 հազար դրամ արժի, մարդուն խանգարում է նպաստ ստանալու համար, սակայն այս ամենից հետո ո՞վ կհամարձակվի պակաս գրել»,- ասաց Զառի համայնքապետը: Սուգումներից հետո Զառում 1522 բնակչից նպաստ է ստանում 12 ընտանիք:

«Գյուղապետները մեր աչքերն են համայնքներում»

«Ես դեմ եմ արտահայտվել նախարարության կողմից կազմված ակտին: Մենք փորձել ենք ապացուցել, որ նրանց թվերն անիրատեսական են»,- ասաց Աբովյանի տարածային սոցիալական ծառայության պետ Արտավազդ Ստեփանյանը: Նրա ասելով, նախարարության սուգումները համընկել էին ծխամատյանների փոփոխման աշխատանքներին: Փաստագրումներն իրականացվում են հունվարից մինչեւ ապրիլ: Այդ աշխատանքային գործընթացը նրանք սկսեցին տարվա կեսից: Նուռնուս գյուղում մի ընտանիքի համար գրել էին, որ 8 խոճկոր ունի, բայց իրականում չունեին, ծխամատյանում սխալմամբ գրանցվել էր, ո՞վ է մեղավորը: Մենք նրանց ապացուցեցինք, որ ակտը սխալ է կազմված եւ շարունակեցինք ընտանիքների մի մասին նպաստ վճարել:

-Գյուղապետներն անտեղի՞ վճարեցին:

-Կային խախտումներ, բայց ոչ այն չափով, որ նշվում էր ակտի մեջ:

«Ակտում նշվում էր, որ 3800 ընտանիքի մեջ 116 ընտանիք սխալ են ստացել նպաստը, յուրաքանչյուր ընտանիքի վերաբերյալ մենք կրկնակի ստուգում անցկացրինք: Հանրապետության դատախազությունը նորից ստուգում կատարեց եւ 2/3-ով համոզվեց մեր ճիշտ լինելու մեջ: Մյուս 50%-ի հետ համաձայն ենք»,- հայտնեց Աբովյանի տարածային սոցիալական ծառայության պետ Արտավազդ Ստեփանյանը:

Նրա ասելով, համայնքապետարանների կողմից էլ միտումնավորությունն այդքան բացահայտ չի եղել: «Եթե գյուղապետը խիստ կարիքավոր ընտանիքի մոգին կամ հորթը չի նշում, խիստ հանցագործություն չի դա»,- ասաց նա ավելացնելով, որ այնուամենայնիվ, համայնքապետները մնում են իրենց աչքերը համայնքում:

Ասել, որ համայնքապետները միայն այդ մոտեցումով եւ կարեկցանքից ելնելով են հարցին մոտեցել, իհարկե, ճիշտ չի լինի: Բոլորին է հայտնի, որ համայնքապետները նպաստը ծառայեցնում են ընտրություններին՝ խոստանալով որ ձայների դիմաց նպաստ կստանան կամ նման դեպքերում հարազատական կապերն են առաջնային դառնում: Համայնքապետների կատարածը կրկնակի հանցանք է, քանի որ պետությունը դոտացիան հատկացնում է համայնքի հզորացմանը, սակայն համայնքապետները, կամովին ընդունելով չարաշահումների փաստը, դոտացիան դարձյալ ծառայեցրին սեփական կարիքներին՝ պետությանը հասցված վնասը փոխհատուցելով պետության բյուջեից: Այս ամենը արվեց իրավապահ մարմինների թողտվությամբ, այն դեպքում, երբ դատախազությունը հայցադիմումը ներկայացրել էր գյուղապետերի դեմ՝ չարաշահումների մեղադրանքով եւ ճիշտն այն էր, որ նրանք հատուցեին անձնապես, չէ՞ որ ընդունել էին սեփական մեղավորությունը: Միայն Զառի գյուղապետն էր, որ մտածում էր, ավագանու հետ համաձայնեցնելով, չվճարել նախկին համայնքապետի 26 ամսվա աշխատավարձը, որ պետությունը պարտք էր մնացել նրան:

Ս. Պ.

Այս աղբանոցը 40 ընտանիք է կերակրում

Այս աղբանոցը գտնվում է Աբովյան քաղաքի ու Ջրաբեր գյուղի միջանկյալ մի հատվածում: Տհաճ է մտածելն անգամ, որ աղբանոցը գտնվում է քաղաքի հենց քթի տակ, էլ չենք խոսում էկոլոգիական աննպաստակահարմարության մասին: Սակայն մեր օրերում անպետք ոչինչ չկա եւ աղբանոցն էլ մարդիկ ջանում են ծառայեցնել ինչ-որ բանի: Ահա այս աղբանոցը 40 ընտանիք է կերակրում: Աղբը փորփրողներից մեկի հետ մեր զրույցը ներկայացնում ենք առանց մեկնաբանությունների ու խմբագրումների:

Ամեն օր ոտքով Աբովյանից գալիս ենք այս աղբանոցը: Փոսեր կան, որտեղ ժամանակին սիրուս է թափված եղել, դրանք ռազմական նշանակության դեպքեր են, որոնց մեջ պղինձ ու ալյումին կա: Տանում ենք հանձնում, մի կերպ հաց ենք վաստակում: Արանից օրական 1200-1300դրամ եմ վաստակում՝ հազիվ հաց, մակարոն, մարգարին եմ գնում, կոմունալ ծախսեր չեմ կարողանում տալ: Նպաստ չեմ ստանում, թոշակառու չեմ: Նախկինում Սիրուսի գործարանում եմ աշխատել, երեք տղա ունեմ, մեկը Ռուսաստանում է, մյուս երկուսն էլ՝ տանն են, աշխատանք չունեն: Երբեմն գնում բանվորություն են անում, յուլա ենք գնում:

Այստեղ եկողները հիմնականում խելացի, կիրթ, աշխատանք չունեցող մարդիկ են: Օրինակ, մեկը նախկին ՊԱԿ-ի աշխատակից է: Մի մասը Աբովյանից են, Բյուրեղավանից, բոլորս էլ իրար ճանաչում ենք: Գալիս ենք իրար պատմում մեր ցավերն ու դարդերը: Այս դարում ամբողջ աշխարհն ապրում, ծաղկում, լիանում է, իսկ մեր նման մարդիկ գալիս են էս աղբանոցը: Սա մեր պրեզիդենտի ամենավատ վիճակը պետք է լինի:

-Տարածքների համար չե՞ք վիճում:

-Չէ, ի՞նչ վիճել, ամեն մեկը մի բան է հավաքում. մեկը՝ երկաթ, մյուսը՝ ապակի, էն մյուսը պղինձ, ռադիոմաս, կուլտուրական գործ են անում, ճիշտ է զիբիլը մնում է զիբիլ: Եկել եմ փորփրեմ, տեսնեմ, որտեղ սիրուս կա թափած, մաղը բերեմ մաղեմ հանեմ միջից: Սիրուսում աշխատել եմ էներգոկոմբինատի բաժնում՝ազոտ, կիսլորոդ, վառավոդ, ամբողջ ցեխերին, նաեւ շրջանին ապահով էլ ենք դրանցով: Օպերատոր եմ եղել, լավ աշխատավարձ եմ ստացել, բայց մեր ղեկավարներն էլ մեզ հետ այսօր անաշխատանք են:

-Կներկայանա՞ք:

-Անուն-ազգանունս ասելու կարիք չկա, Աբովյան քաղաքում բոլորն ինձ ճանաչում են: Տասը տարի էս աղբն եմ քանդում, 50 տարեկան եմ, թոշակի էլ չեմ հասնի: Էնքան թունավոր նյութեր կան էս աղբի մեջ, որ շնչում ենք, գնում է մեր թոքերը: Մոտ 40 հոգի կլինեն այստեղ եկողները: Մարդ ինքն իր համար պետք է ստեղծագործի, պայքարի, ապրի, թե չէ ինչ է՝ մարդիկ երազի պես են ապրում, միլիոններ են դիզում, գնում ու ոչինչ չեն հասկանում, ոչինչ չեն անում:

«Սոցիալական աշխատողը մեծ ուժ է»

Սկիզբ էջ 8

Ընտրությունների շրջանում հազվադեպ չեն նաեւ կադրային փոփոխությունները: Հնարավոր է, որ մի մարզպետ իր մխահաճույքով տան կամ նրան նշանակի ծառայության պետ կամ ազգի պատասխանից, եւ դրան չի փրկում անգամ քաղծառայողի կարգավիճակը: Թեպետ քաղաքապետարաններին անցնելուց հետո նոր լրամշակված կանոնադրություն չկա, թե ով պետք է սոցծառայության պետին նշանակի կամ ազգի աշխատանքից, սակայն մայրաքաղաքում այս գործընթացը լիովին կառավարում է քաղաքապետը: Մեզ հայտնի վերջին փոփոխությունը կատարվեց Երեւանում, երբ հերթական ընտրությունից առաջ 2003թ.-ի սեպտեմբերի 3-ին Աջափնյակ եւ Դավիթաշենի քաղաքապետը աշխատանքից ազատվելու դիմում էր պարտադրել գրել տարածքի սոցիալական ծառայության պետին: Վերջինս հրաժարվել էր նրան տրամադրել նպաստառուների ցուցակը, որն անհատական ծածկագրերի մասին օրենքի համաձայն չի թույլատրվում հրապարակային դարձնել: Սակայն եղան սոցծառայության պետեր, որոնք չժխտեցին ցուցակն ամբողջապես ընտրական նպաստակին ծառայեցնելը եւ աշխատակիցներին ընտրական հանձնաժողովներում ընդգրկելը: Ավելին, քնադատեցին իրենց այն գործընկերներին, որոնք ինչ-որ տեղ չէին համագործակցել քաղաքապետի ու մարզպետի հետ եւ արդյունքում ազատվել էին աշխատանքից:

Քանի որ մայրաքաղաքում սոցիալական ծառայության աշխատողները քաղծառայողներ չեն, նրանք կաբինետված չեն նաեւ ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելով՝ սկսած քաղաքապետի ընտրությունից եւ ավարտած նախագահական ընտրություններով: Քաղծառայության մասին օրենքով առավել մեծացվեց սոցիալական ծառայության աշխատակցի կախվածությունը մարզպետից: Մարզերում տեսուչներին նշանակում եւ դասային աստիճանը շնորհում է աշխատակազմի ղեկավարը: Գործակալության պետին նշանակում է աշխատակազմի ղեկավարը, իսկ դասային աստիճանը շնորհում է մարզպետը: Այսինքն, նրա աշխատավարձի չափը ուղղակիորեն պայմանավորված է մարզպետի բարյացակամությունից, քանի որ դասային աստիճանից է կախված գործակալության պետի եւ տեսուչների աշխատավարձի չափը:

Չնայած դրան, ծառայության պետերը նշում են, որ նպաստների համակարգը հանրապետության պատասխանատուների համար գումարային ոչ մի եկամտի աղբյուր չի ստեղծում, բացի նրանից, որ ծառայության պետի պատասխանում նշանակվելու համար 3000-4000 դոլար պետք է վճարի նշանակողին, որը մարզերում փաստացի մարզպետն է, իսկ մայրաքաղաքում՝ քաղաքապետերը: Մեր հարցին, թե ինչու է մարդը պատրաստ 3000-4000 դոլար կաշառք տալ այդ պատասխանն զբաղեցնելու համար, երբ գիտի, որ մեկ տարի հետո պատասխանատուի փոփոխության հետ ինքը եւս կարող է դուրս մղվել՝ ծառայության պետերից մեկն ուղղեց ինձ՝ «ոչ թե մեկ տարի, այլ հնարավոր է, որ մեկ ամիս հետո ազատվի աշխատանքից»: Սակայն, նրա ասելով, գումար տվողը շատ մեծ ախորժակ է ունենում եւ մի պարզ թվաբանական հաշվարկով է առաջնորդվում, որը տեղում հաշվարկելով ներկայացրեց մեզ. օրինակ, տարածքում կա 1700 նպաստառու, եթե անգամ 700-ից չվերցնի (նրա ասելով, գրեթե բոլորն էլ գումար տալիս են), մնացած 1000-ից 5000-ական դրամ վերցնելով՝ կստացվի 5000 դոլար, որը միանգամայն ձեռնտու է անգամ կարճ ժամանակ պատասխանատուներ դարձնելու համար:

ԱԶԳ

Հասարակությունից մեկուսացածներ

Ջրի մեջ կորած, ջրի կարոտ

Կոտայքի մարզը Հայաստանի ամենամեծ ջրահավաքն է Ախուրյանից հետո: Նախալեռնային այս շրջանում ջուրն այնքան առատ է, որ լիուլի սնում է նաեւ Արարատյան դաշտավայրը: Սակայն տարածաշրջանի Սոլակ, Քաղսի, Զորավան, Սեւաբերդ, Գառնի, Զառաբեր գյուղերում ոռոգման խնդիրը թերեւս ամենացավոտն է: Անցած տարի Գողթում ոչդաստու այգիների տնկարկներ հիմնվեցին, բայց ոռոգման ջրի անբավարարության պատճառով տնկարկների մի մասը չորացավ: Գյուղն ու գյուղացին ծայրահեղ զրկանքների գնով են կարողանում հողից ինչ-որ բան պոկել իրենց օրավուր ապրուստը հոգալու համար: Տեղի բնակչությունն ավանդաբար զբաղվել է հիմնականում պտղաբուծությամբ, գյուղատնտեսական կուլտուրաների լայնածավալ մշակություն երբեք չի եղել: Կենսապայմանների վատթարացման հետ մարդիկ գրեթե բացառապես սկսեցին ապավինել սեփականաշնորհված հողերին, եւ տարածաշրջանի հողերը ներքաշվեցին գյուղատնտեսական շրջանառության ակտիվ հորձանի մեջ:

Ոռոգման ջրով գյուղին ու գյուղացուն ապահովելը ամենաուղղակի իմաստով նաեւ ռազմավարական արժեք ունի, աղքատությունը հաղթահարելու արժեք, ինչն իբր թե իրեն սոցիալական հոչակած մեր պետության գերակա խնդիրը պիտի լինի: Մարզի գյուղերից շատերում մենք հաջորդաբար հանդիպում էինք միայնակ կենսաթոշակառուների, որոնց զավակները լքել էին գյուղը հեռուներում ապրուստի միջոց գտնելու հույսով: Բազմաթիվ տնտեսություններում նույն պատճառով բացակա էր ընտանիքի հայրը: Ներքին միգրացիան քայքայում է նաեւ այս մարզի գյուղերը: Հայաստանի անկախացումից հետո նոր իրավիճակն անլուծելի խնդիրների մի ամբողջ փունջ բերեց Կոտայքին: Տասնամյակներ շարունակ ոռոգումն այստեղ իրականացվել է մեխանիկական եղանակով, այսինքն էլեկտրաէներգիայի ծախսով: Եւ 1990-92թթ. սկսած, հոսանքի գումարի 70 տոկոսը կիսավճարունակ գյուղացին պարտք է մնացել պետությանը:

Այս պահին Կոտայքի մարզում հողն ինքնահոս եղանակով ոռոգելու հնարավորություն չկա: Թերեւս փոկողակ կարող էր դառնալ Մարմարիկի ջրամբարը, որի շինարարությունն սկսվեց 1981-82թթ., բայց այն այդպես էլ կիսակառույց մնաց: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ռուդիկ Ղուկասյանի հավաստմամբ, անգլիացի փորձագետների մասնակցությամբ մանրամասն հետազոտվել է կիսակառույց ջրամբարը, մշակվել է դրա վերականգնման ծրագիրը, ներկայացվել Համաշխարհային բանկին, եւ հույս կա, որ եկող տարվանից շինարարությանն ընթացք կտրվի: Ըստ հաշվարկների ջրամբարի վերակենդանացումից հետո, տարեկան տեղումներն էլ ներառած, հնարավորություն կստեղծվի 36 մլն խ/մ ավել ջուր ապահովել մարզին: Ի դեպ, Մարմարիկի ջրամբարի կառուցումը հրատապ է նաեւ անվտանգության տեսանկյունից: Ջրամբարի շրջակայքում 7 բնակավայր կա, իսկ կիսավարտ սելավատարներն ու պատվարները ամեն պահ վթարի վտանգ են բովանդակում:

Հաշվարկվել է, որ միայն անվտանգության խնդիրը լուծելու համար 2,5 մլն դոլար է պետք, ջրամբարն ամբողջովին կառուցելու համար՝ 5 մլն 200հզ դոլար: Ռուդիկ Ղուկասյանը ավելացնում է, որ այժմ աշխատանքներ են գնում նաեւ Սոլակի ինքնահոս ոռոգման ցանցը կառուցելու համար, որը 4500 հա ոռոգելի կդարձնի: Մեկ այլ ծրագրով (դարձյալ ներկայացվել է Համաշխարհային բանկին) 1,5 մլն դոլարի ներդրմամբ Գառնին, Գեղարդը եւ Կոտայքի եւս 5 գյուղեր իրենց օրվա կարգավորիչ ջրամբարները կունենան, կապահովվեն եւ խմելու, եւ ոռոգման ջրով: Սակայն այս բոլոր ծրագրերից ու նախագծերից անդին գյուղացին շարունակում է իր միայնակ, հուսակտուր կռիվը հողի հետ: Ջրի մեջ կորած, սակայն պապակ հողերով գյուղերը ոռոգելու անհնարինությունը թե տնտեսական, թե զուտ մարդկային գործոնի թերակատարության արդյունք են:

Ծայրագույն ծանր վիճակում են հայտնվել ոռոգման միջհամայնքային ցանցերը: Դրանց ճակատագիրը հանձնվել է համայնքների տնօրինությանը, որոնք նման ծանրակշիռ «վստահությունն» արդարացնելու ոչ ֆինանս, ոչ էլ հնարավորություն ունեն: Խորհրդային միության փլուզումից հետո ավելի քան 15 տարի այս ոլորտում ներդրումներ չեն եղել: Երկար տարիներ շահագործվելով ու երբեւէ չնորոգվելով, դրանք ի վերջո, քայքայման եզրին են հասել: Եվ բնականաբար, ջրի մշտական կորուստները նաեւ այս պատճառով են: Աչքաթող արված, կիսախարխուլ վիճակի հասած ոլորտը պետությունը նոր-նոր փորձում է ուշքի բերելու փորձեր անել: Երկարատեւ, անքույլատրելի անգործությունից հետո այս տարվա մարտի 13-ին կառավարությունը վերջապես որոշում ընդունեց ոռոգման համակարգի կառավարումը ֆերմերներին, մասնավորապես Ջրօգտագործողների ընկերակցությանը (ՋՕԸ) հանձնելու մասին: Նախատեսվում է 2004-2005թթ. ոռոգման ցանցն ամբողջությամբ փոխանցել այս կառույցներին: Ծրագիրը ֆինանսավորում է Համաշխարհային բանկը՝ 9,2 մլն վարկային գումարով: 900 հզ դոլար հատկացվել է մեր կառավարության կողմից: Ընդհանուր ծախսերի 30 տոկոսը հոգալու են իրենք՝ ֆերմերները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմելու է 13 մլն դոլար: Ամբողջությամբ այս կառույցների վրա է լինելու լոկալ տեղանքների երկարատեւ շահագործումը, իրենք են որոշելու առաջնահերթ պրոբլեմները, իրենք են քաշելու վերանորոգումների ծանր հոգսը: Այսօրինակ կառույցներ արդեն հիմնվել են մարզի ողջ տարածքում:



Ջրային տնտեսություն պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ռուդիկ Ղուկասյանը գյուղերի ջուր չունենալու հարցում մեղադրում է միայն համայնքապետերին. որոնք ջրային ցանցն իրենց ձեռքում պահելով գյուղում իշխանավայել զգալու լծակներն են մեծացնում

Կոտայքի մարզի Գառնի գյուղը ոչ միայն ոռոգման, նույնիսկ խմելու ջուր էլ չունի: Հատուկենտ աղբյուրներից գյուղացիները ջուրը բեդոներով են բերում, այն էլ միայն նրանք, ովքեր մեքենա կամ դրա հնարավորությունն ունեն: Այն դեպքում, երբ Գառնիի ջրամբարը սպասարկում է ողջ Արտաշատ քաղաքին ու Երեբունի համայնքին՝ Երեւանում: Ջրատարության համակարգն ամբողջովին բարձիթողի վիճակում է: Գառնիի 7 աղբյուրների ջրերը կեսճանապարհին ճահիճ են դառնում՝ անհետ կորչելով հողի հազար ծակուծուկերում: Ջրանցքի՝ տարիներ չմաքրված հատակում ժամանակի ընթացքում ավելանում է խոտածածկը, ջրի ծավալը կրկնակի, եռակի պակասում է, եւ պապակ հողերն այդպես էլ չեն հագեցնում:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալի վկայությամբ ոռոգման ջրի քաղցը միայն տնտեսական գործոնով չի պայմանավորվում: Ցանցի թերակատար, թույլ վերահսկողության պատճառով տեղական իշխանավորներից շատերը գործում են ինքնագլուխ, անքույլատրելի սկզբունքներով, սեփական շահույթին հետամուտ: Գառնի գյուղը դրա ակնհայտ արտահայտությունն է: Եթե համայնքային ցանցը հանձնվում է Հայջրմուղկոյուղու սպասարկմանը, ապա ըստ գործող մեխանիզմի, պոմպակայանը սնող հոսանքի սուբսիդավորումը (80 տոկոսով) կատարում է պետությունը: Այդ գումարը համայնքն այլ նպատակներով օգտագործել չի կարող, այն ուղիղ գծով անցնում է էլցանցերի տնօրինությանը: Մնացած 20 տոկոսի հոգսը հոգալու է համայնքը: Բայց եթե ոռոգման համայնքային ցանցն իբրեւ սեփականություն, գյուղի իշխանավորը պահում է իր մոտ, ծախսերի վճարումն ամբողջությամբ ընկնում է տեղական բյուջեի վրա:

Գյուղապետերի առերեւույթ տարօրինակ այս գործելաոճը միանգամայն բացատրելի դրդապատճառներ ունի. եթե ջուրն իրենց ձեռքում է, ապա իր փոքրիկ տնտեսությունում իրեն իշխանավայել զգալու լծակներն էլ շատ են: Գյուղացիներին խոստանում են, թե ծրի ջուր կտան նրանց: Ընտրությունների ժամանակ էլ այս գործոնն անվրեպ աշխատում է: Եվ բացի այդ, ոչ ոքի գաղտնիք չէ, որ գյուղապետերի մեծամասնությունը, այսպես ասած՝ պահեստային, չձեւակերպված, պատկառելի ծավալի հողատարածքներ ունեն, որոնք սովորաբար տերեւ աշխատում է: Եվ բացի այդ, ոչ ոքի գաղտնիք չէ, որ գյուղապետերի մեծամասնությունը, այսպես ասած՝ պահեստային, չձեւակերպված, պատկառելի ծավալի հողատարածքներ ունեն, որոնք սովորաբար տեղական կամ մարզային մյուս իշխանավորներին են նվիրաբերել: Այդ հողերը ոռոգվում են նույն այդ ջրով, անվճար: Իսկ գյուղացիներին ջուրը տրվում է, իհարկե, ոչ թե ծրի, այլ նրանց վճարունակության հնարավոր սահմանը նկատի առնելով: Պետությունը 1 խ/մ ոռոգման ջրի սակագինը սահմանել է 4 դրամ,20 լումա: 1 հա-ի համար գյուղացին պիտի վճարի ասենք, 6 հազար դրամ, սովորաբար պահանջվում է 2000-2500: Ի դեպ, գյուղացիները գաղափար անգամ չունեն, թե իրականում ինչքան պիտի վճարեն: Սակագնային այս արատավոր տեխնոլոգիայով է առաջնորդվում գյուղերի մեծամասնությունը: Եւ պետական պարտքերի բերը ողջ հանրապետության կտրվածքով ոչ ավել, ոչ պակաս 280 մլն դրամ է:

Այսինքն, հույս չկա, թե ջրօգտագործող ընկերություններ ստեղծելու ռեֆորմը կյանքի կոչելով, համակարգում հնարավոր է կարգ ու կանոն հաստատել: Այնուամենայնիվ, ենթադրաբար կանխատեսելով, թե այդ ընկերություններն ի վերջո, կայանալու են եւ կառավարման ասպարեզի՝ անցյալում թույլ տված իր վրիպումներն ու սխալները սրբագրելու ակնկալիքով, առաջիկայում կառավարությունը մտադիր է այդ 4,20 լուման հասցնել 5,20-ի, որպեսզի մինչեւ 2008թ.-ը համակարգը կարողանա անցնել ինքնածախսածածկման: Նախատեսվում է, որ եկող տարվանից, պետական սուբսիդիան 80 տոկոսից կնվազեցվի 50-ի: Այսինքն, պետությունն ասիճանաբար փորձում է այս ասպարեզի իր մենաշնորհը հանձնել գյուղացուն (թող գլուխ հանեն ստեղծված իրավիճակից, ինչպես ուզում են) հանձնարարելով նրան ներքին սակագներ մշակել ու վերանորոգումների ծանր հոգսը քաշել: Ըստ այդ մեխանիզմի, գանձումները կիրականացնեն ջրօգտագործող ընկերությունները: Իր խնդիրը մնալու է միայն վերահսկողի դերը՝ թե արդյոք նոր տերերը կարողանու՞մ են ճիշտ շահագործել ջրանցքներն ու ջրամբարները:

Ոլորտի իրավասուների եւ մասնագետներից շատերի հետ մեր զրույցների ընթացքում վերջիններս անընդհատ շեշտում էին այն հանգամանքը, որ առայսօր համակարգի կառավարումն ընթացել է սխալ հունով: Կառավարման այս նոր տարբերակի ընտրությունն ակամա հիշեցնում է այն մարտավարությունը, որ մեր կառավարությունը ոչ վաղ անցյալում կիրառեց բնակֆոնդի հանդեպ՝ ձեռքերը լվանալով ու դրա պահպանման ու նորոգումների հոգսը գցելով նորաստեղծ համաշխարհությունների նկուն ուսերին: Կարո՞ղ են արդյոք ջրօգտագործող ընկերությունները լուծել օրհասի հասած համակարգի հիմնախնդիրները, դժվար է հուսալ: Թե այս ոլորտին էլ սպասվում է բնակֆոնդի ճակատագիրը, որը մատնվել է դանդաղ, ասիճանական փլուզման, թեւ դրա վերականգնումը, ինչպես ոռոգման համակարգի պարագայում, մեր պետության ուժերից վեր է:

Ի դեպ, մասնավորապես Կոտայքի մարզի առումով, մի անքույլատրելի սխալ էլ է գործվում: Կոտայքի մարզը ոռոգման ջրով ապահովելու խնդիրը բազմաշերտ ծալքեր ունի, որի ամբողջությամբ իրականացումը հաճախ անհնարին է՝ անկախ ամեն ինչից: Հայաստանի բնական պայմաններն այնպիսին են, որ ոչ բոլոր հողատարածքներն են պիտանի մշակության համար, եւ գյուղացին ոչ բոլոր տեղերում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու իրավունք ունի: Կոտայքի տարածքի շատ հատվածներ, իսկ եղվարդի տարածաշրջանն ամբողջությամբ, պատված է սողանքային գոտիներով, տեղի բնակիչների ասած հարամներով: Այս տեսանկյունից անհասկանալի է հատկապես Սեւաբերդի վիճակը: Ջուրը գնում, կորչում է հողի հազարավոր ճեղքերում: Տեղեր կան, որ կորուստները 82 տոկոսի են հասնում: Հաշվված է, որ եղվարդի տարածաշրջանում, օրինակ, տարեկան 610 մլն խ/մ ջրի կորուստ է լինում: Եւ եթե 1 հա ոռոգելու համար պիտի ծախսվի ասենք 6600 խ/մ ջուր, այստեղ այն կազմում է 22 հազար խ/մ: Մի կողմ թողնենք այն իրողությունը, որ գյուղացին, եթե ցանկանա էլ, չի կարողանա վճարել դրա դիմաց, քանի որ ոչ թե շահույթ, այլ միայն վնաս է կրելու: Եւ այս դեպքում նրանից օրինապահություն պահանջելն անիմաստ է:

Ոռոգման որեւէ ծրագիր իրականացնելուց առաջ դեռ սողանքագետներն ու երկրաբանները պիտի ուսումնասիրեն, թե գյուղատնտեսական այս կամ այն կուլտուրայի մշակության համար 1 հա-ն ինչքան ջուր է կլանելու, եւ որ հատվածներում է անմոռակահարմար ոռոգումը: Այլապես իմաստագրկվում են նաեւ մարզը ոռոգման ջրով ամբողջապես բավարարելու միջազգային ու տեղական բոլոր ծրագրերը: Խորհրդային շրջանում այս տարածքները նախատեսվել են ամառանոցներ կառուցելու համար, որ լավագույն դեպքում պտղաստու այգիներ ու բանջարանոցներ պիտի գցվեին: Դրանց ոռոգումը հանձնարարվում է միանգամայն այլ՝ կաթիլային կամ ցնցուղային տարբերակով, եւ սողանքով վարակված հողը շատ չի տուժում: Հիմա ջուրը հորձանքով հայտնվելով սեւահողի ու կավահողի արանքում, անվերահսկելի արագացնում է սողանքի շարժը՝ ասիճանաբար նոր տեղանքներ կլանելով ու ընդլայնելով սահմանները: Եւ հնարավոր փորձանքի հավանականությունը՝ մեծ է ու կանխատեսելի: Ողջաբերդի օրինակն արդեն մեր աչքի առաջ ունենք: Ընդգրկված ե՞ն սողանքագետներն այդ բոլոր ծրագրերում եւ փլուզումների ենթակա հին ու նոր հատվածների քարտեզագրում իրականացվու՞մ է արդյոք, թե այս դեպքում էլ գյուղի ու գյուղացու բախտը հանձնվել է նախախնամության կասկածելի բարեհաճությանը: Այս մասին մեր հարցմանը ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի գեոէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ, անվանի սողանքագետ Ռուբեն Յաղոյանը բացասական պատասխան տվեց: Նույն պատմությունն է կրկնվում, ինչ Լինսի հիմնադրամով արդեն իրականացված ճանապարհաշինական ծրագրում:

ԳԱՐԵԳԻՆ ԳԱՆԻԵԼՅԱՆ

Միջազգային

«Թավշյա» տրամադրություն Աջարիայում

Աբաշիձե. «Հեշտ չէ խանդել իմ իշխանությունը»

Աջարիայի առաջնորդ Ասլան Աբաշիձեն հայտարարել է, որ ինքնավար հանրապետությունում դեմոքրը կարող են զարգանալ ինչպես Աբխազիայում եւ Հարավային Օսիայում, երբ 90-ականների սկզբներին վրացական զորքերն արյունալի հակամարտության մեջ էին անջատողական շրջանների հետ, հաղորդում է «Civil.ge» թերթը:

Աբաշիձեն նաեւ զգուշացրել է, որ Աջարիայում հնարավոր հակամարտության դեմքում «մենք գործ ենք ունենալու խաղաղ կարգավորման անվերջ բանակցությունների հետ, ինչպես Աբխազիայում»: Երեկ վրացական եւ ռուսական մամուլում հայտնվեցին տեղեկություններ, որ ինքնավարության տարածքում ժողովրդին զենք են բաժանում, Բաթումի փողոցներում երեւացել են հրասայլեր: Թբիլիսիում չեն բացառում, որ զենքը դուրս է բերվել Աջարիայում տեղակայված ռուսական 12-րդ ռազմակայանից:

Վրաստանի ՆԳ նախարար Գեորգի Բարամիձեն հաստատել է Աջարիայում ժողովրդին զենք բաժանելու տեղեկությունը: «Մենք թույլ չենք տա ընդհարումներ եւ արյունահեղություն: Նրանք, ովքեր զենք են բաժանում, անպայման բացահայտվելու եւ պատժվելու են: Եթե ժողովուրդը ցանկանում է իշխանափոխություն Աջարիայում, ապա դա պետք է տեղի ունենա սահմանադրական եւ խաղաղ ճանապարհով», ասել է Բարամիձեն:

Գլխավոր դատախազ Իրակլի Օքրուաշվիլին ասել է. «Մենք պատրաստ ենք ցանկացած մարտահրավերի եւ բոլորին կտանք արժանի պատասխան»:

Բաթումի եւ Թբիլիսիի հարաբերությունների լարվածությունը սկսվել է 1991 թ.-ից: Արդեն 13 տարի Աբաշիձեն, որն ինքնավարության տարածքում հաստատել է ավտոռիտար վարչակարգ, չի եղել Թբիլիսիում դա պայմանավորելով կենտրոնական իշխանությունների կողմից իր նկատմամբ հնարավոր ահաբեկչությամբ: Առավել բարդ են Ասլան Աբաշիձեի եւ Վրաստանի նոր նախագահի հարաբերությունները: Վերջին մի քանի ամիսներին հնչել են փոխադարձ մեղադրանքներ. Աբաշիձեն Սաակաշվիլուն համարում է ֆաշիստ, վերջինս Աբաշիձեին՝ արյունարբու դիկտատոր:

Հունվարի 25-ին, Սաակաշվիլու պատգամավորության արարողության շրջանակներում, Վրաստանի նախագահը ժամանեց Բաթում եւ Աբաշիձեի հետ մասնակցեց զինվորական շքերթին: Սաակաշվիլու հեռանալուց հետո Աբաշիձեն տեղի հեռուստաընկերությամբ հայտարարեց, թե այնքան էլ հետաքրքիր չի լինի քանդել իր իշխանությունը:

Վրաստանում իրականացված թավշյա հեղափոխությունից հետո Աբաշիձեի դիրքերը սասանվել են: Ինքնավարության տարածքում արդեն գործում են Աբաշիձեի վարչակազմին ընդդիմադիր 2 քաղաքական ուժեր՝ «Ժողովրդական Աջարիա շարժումը», որը ղեկավարում է պետնախարար Զուրաբ Ժվանիայի մտերիմներից Էդուարդ Սուրմանիձեն, եւ «Մեր Աջարիա» շարժումը, որը ղեկավարում են Սաակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցության գրասենյակից:

Աբաշիձեին ընդդիմադիր երկու շարժումների առաջնորդները չեն թաքցնում, որ իրենց նպատակը Աջարիայում իշխանափոխությունն դեմքում վաստակել է Վրաստանում ապրելու իրավունք», ասել է Բերեզովսկին «Ռեգնում» գործակալությանը:

Քաղաքական մեկնաբան Իվլիան Խայինդրավան «Civil.ge» թերթին ասել է. «Աբաշիձեի հեռանալն անշրջելի է: Հարցն այն է, թե ինչպե՞ս դա պիտի տեղի ունենա՝ այնպես, ինչպես Շեւարդնաձեն արե՞ց, թե՞ փորձելու է իշխանությունը պահել զինված միջոցներով»:

Աբաշիձեի մամուլի ծառայությունը երեկ հերքեց ժողովրդին զենք բաժանելու խոսակցությունները, սակայն մյուս կողմից՝ հաստատեց, որ ինքնավարության տարածքում իրավիճակը լարված է:

Նոյեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններից դեռ մեկ ամիս առաջ Աբաշիձեն ստեղծեց հակաահաբեկչական գումարտակ: «Աջարիա» հեռուստաընկերությունն այդ օրերին, վկայակոչելով ռուսական 12-րդ ռազմակայանի մի ռուս սպայի, հաղորդեց, որ հակաահաբեկչական գումարտակն իր առաջ դնում է 2 հիմնական խնդիր՝ պայքար ահաբեկչության եւ զինված հարձակման դեմ:

Պետնախարար Զուրաբ Ժվանիան փորձել է մեղմել իր եւ նախագահ Սաակաշվիլու կողմնակիցների հայտարարությունները: «Ինքնավարության տարածքում կան կարեւոր խնդիրներ, որոնք մենք պետք է կարգավորենք Աջարիայի իշխանությունների հետ», ասել է Ժվանիան:

Ռ. Հ.

Պատրիարքությունը. «Կիպրոսի հույները պատրաստ են անմիջապես բանակցություններ սկսել»

Արտահայտելով Կիպրոսի հունական եւ թուրքական մասերի բնակչության տրամադրությունները, կղզու նախագահ Թասոս Պապադոպուլոսը հայտարարել է, որ հունական կողմը պատրաստ է «անմիջապես» բանակցություններ սկսել, որպեսզի կղզին վերամիավորվի մայիսի 1-ին եվրամիությանն անդամակցելուց առաջ:

Ստրասբուրգում՝ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում ելույթ ունենալով, Պապադոպուլոսն ասել է, որ հունական կողմը «հնարավորինս ճկուն կլինի տեւական հաշտությանը նպաստող լուծումներ գտնելու համար»: Նրա խոսքերով, «Կիպրոսի շահերին համապատասխանում է եվրամիությանն անդամակցելու պահին վերամիավորված լինելը»:

Միաժամանակ Ֆրանսպրեսի թղթակիցը մեջբերում է նախագահի այն խոսքերը, որ Կիպրոսում «երկու պետության գոյությունն անընդունելի է»: Ի դեպ, խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձեւը կղզու երկու մասերի ներկայացուցիչներին կոչ է անում «անհապաղ վերսկսել բանակցությունները», որպեսզի վերջ դրվի երեսուն տարի շարունակվող բաժանվածությանը: Ժամանակը չի սպասում:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանն իր հերթին Բրյուսելում հայտարարել է, որ կղզու երկու համայնքները պարտավոր են համաձայնության գալ մինչեւ մարտի վերջը: Այդ դեպքում հնարավոր կլինի ապրիլին կղզու երկու մասերում հանրաքվեներ անցկացնել կարգավորումը վավերացնելու նպատակով: Երեկ Բրյուսելում Անանի եւ Պապադոպուլոսի հանդիպման ժամանակ խոսվել է ՄԱԿ-ի հովանու ներքո Կիպրոսի վերամիավորման բանակցությունների հիմք ստեղծելու մասին:

Անցյալ շաբաթավերջին Կոֆի Անանն արդեն «հուսադրող» հանդիպում էր ունեցել Թուրքիայի վարչապետ Թայիփ Էրդողանի հետ: Կղզու հյուսիսն օկուպացրած Թուրքիան եւս ուզում է վերսկսել բանակցությունները նախքան մայիսի 1-ը: 2002 թ. հրապարակված Կոֆի Անանի ծրագրով նախատեսվում է կղզում ստեղծել երկու պետությունների ճկուն դաշնություն: Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ բանակցություններն ընդհատվել են մեկ տարի առաջ, երբ կիպրացի թուրքերի ղեկավար Ռաուֆ Դենքթաշը մերժեց Կոֆի Անանի ծրագիրը:

Սակայն կղզու թուրքական մասում 2003 թ. դեկտեմբերյան ընտրություններից հետո այնտեղ ստեղծված ուժերի հավասարության պայմաններում Դենքթաշը մեղմացրել է դիրքորոշումը եւ ավելի շուտ հակված է դեպի կղզու վերամիավորման կողմնակիցները:

Տարածայնությունների շարունակման դեպքում մայիսի 1-ին եվրամիությանը փաստորեն կմիանա կղզու միայն հունական մասը: Դա կվավերացնի Կիպրոսի բաժանումը եւ կդժվարացնի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին: Մինչդեռ այդ երկիրը ջանում է ամեն գնով դառնալ եվրոպական ընտանիքի անդամ:

Պ. Բ.

Պայթյուն եւ զոհեր Շարոնի նստավայրի մոտ

Երեկ առավոտյան Երուսաղեմի կենտրոնում պաղեստինցի մի մահապարտ ահաբեկիչ իրեն պայթեցրել է լեփ-լեցուն ուղերթային ավտոբուսում: Քաղաքի հիվանդանոցների բժիշկները հայտնել են, որ վիրավորներից 10-ի վիճակն օրհասական է:

Պայթյունը տեղի է ունեցել Գազայի եւ Առլոզորովի փողոցների խաչմերուկում, Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի նստավայրից 100 մ հեռու: Երուսաղեմի ոստիկանապետ Միկի Լեւին լրագրողներին ասել է, որ պայթյունի պահին ահաբեկիչը եղել է ավտոբուսի հետնամասում: Նրա խոսքերով, պատահածը «լուրջ ահաբեկչություն է, քանի որ իրականացվել է լեփ-լեցուն ավտոբուսում»:

Իսրայելցի պատգամավորները նշել են, որ ահաբեկչության պահին վարչապետ Շարոնը, ըստ «Հարարեց» թերթի, ներկայումս Նեգեւ անապատում գտնվող իր ագարակում է:

Ականատեսները պատմում են, որ պայթյունի հետեւանքով ավտոբուսը վերածվել է մետաղակույտի. տանիքը պոկված է, իսկ իրանը՝ բառացիորեն կիսված: Շուրջը մի քանի հարյուր մետրի վրա ապակու բեկորներ են:

Իսրայելի կառավարությունն՝ ահաբեկչության համար պատասխանատու է համարում Պաղեստինյան ինքնավարության իշխանություններին:

Հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու Բուշի պահանջը Հայաստանի առաջընթաց քայլով է պայմանավորում Էրդողանը

Սկիզբը էջ 1

Կենտրոնական թերթերին միացավ նաեւ թուրքական հանրային հեռուստատեսությունը: Սակայն, ի տարբերություն թերթերի, հեռուստատեսությունը դիմեց քաղաքագետների կարծիքին, որոնք էլ թուրք-ամերիկյան տարածայնությունների ֆոնին տվեցին առանձնազրույցի ընթացքում ճնշակված հարցերի շուրջ իրենց մեկնաբանությունները: Դրանք Թուրքիայի համար ամենեւին հուսադրող չէին: Մեկնաբանության հեղինակները նույնիսկ չխորհեցին նախագահ Բուշին սպախոս անվանելուց:

Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ ԱՄՆ նախագահը Թուրքիայի վարչապետի հետ ճնշակել է Կիպրոսի հակամարտության, Իրաքում տիրող իրավիճակին, քրդական պետության, Քիրքուքի կարգավիճակին, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող խնդիրները: Ըստ ամենայնի, ճնշակվել է նաեւ Թուրքիայի համար նախատեսված 8,5 միլիարդ դոլարի ամերիկյան վարկի հարցը, որը ոչ մի կերպ չի տրամադրվում: Էրդողանին ուղեկցող պետնախարար Ալի Բաբաջանը թուրքական հեռուստատեսությամբ հայտարարեց, որ թուրքական տնտեսությունը բարվոք վիճակում է, ամերիկյան վարկի կարիքը չի զգացվում: Ուրեմն վարկի շուրջ բանակցություններն ապարդյուն են անցել:

Այլ կերպ, ԱՄՆ-ը հրաժարվել է դա տրամադրել Թուրքիային: Հարցը, սակայն, սոսկ վարկը չէ, այլ Բուշ-Էրդողան առանձնազրույցը, որի ընթացքում թերեւս կողմերը փոխըմբռնման են հասել Կիպրոսի հարցում: Հարկ է սակայն նշել, որ այդ հարցն Իրաքի վերակառուցման ներկա փուլում պատասխանատու Վաշինգտոնի համար հազիվ թե առանցքային լինի: Բացի այդ, վարչապետ Էրդողանը, հարցի շուտափույթ կարգավորման պատրաստակամություն հայտնելիս, նախագահ Բուշին խնդրել է ամերիկյան ազդեցիկ գործիչներից մեկին կողմերի միջեւ որպես միջնորդ նշանակել: Այդ պարտականությունը հանձնարարվել է պետքարտուղար Քոլին Փաուելին:

Ակնհայտ է, որ Եվրամիությանը Կիպրոսի Հանրապետության անդամակցության կիպրական հիմնախնդրի նախաձեռնությունն ամբողջությամբ անցնում է եվրոպական երկրներին: Ուրեմն, Էրդողանը նկատի ունենալով ԵՄ-ի հետ ԱՄՆ-ի մրցակցությունը, միջնորդի խնդրանքով Բուշին դիմելիս Կիպրոսում ամերիկյան նախաձեռնության պահպանման համար անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում: Այսինքն, տվյալ փոխըմբռնումը միանգամայն բխում է ԱՄՆ-ի շահերից:

Թերեւս փոխըմբռնում կարելի էր համարել PKK-KADEK-ի իրավաժառանգորդ KONGRA GEL-ի ընդգրկումն ահաբեկչական կազմակերպությունների ամերիկյան ցուցակում: Սակայն դա ամենեւին չի նշանակում Իրաքի հյուսիսից դրա վտարումը կամ չեզոքացումը: Ի վերջո, այս կազմակերպության արմատները Թուրքիայում են, եթե նույնիսկ հայտարարությանը գործնական քայլեր էլ հետեւեն, որն իրատեսական չի թվում, եւ դրա պատճառով Բուշը սպախոս է անվանվում, միեւնույն է, դա Իրաքի հյուսիսում քրդական պետական միավորի ստեղծումը չի կարող խոչընդոտել:

Թեեւ նախագահ Ջորջ Բուշը Էրդողանին խոստացել էր պահպանել Իրաքի տարածքային ամբողջականությունը, սակայն նա անպատասխան է թողել էթնիկ հիմունքներով երկիրը դաշնության վերածելու, ինչպես նաեւ Քիրքուքը քրդերի վերահսկողությանը հանձնելու հավանականության մասին հարցը: Այսինքն, Իրաքի հյուսիսում դե ֆակտո գոյություն ունեցող քրդական պետությունն իր գոյությունն առնվազն պահպանելու է որպես դաշնության սուբյեկտ, ինչը միանգամայն անընդունելի է Թուրքիայի համար:

Եթե այդպես է, ապա Բուշ-Էրդողան առանձնազրույցի համար էլ անընդունելի պետք է լինի փոխըմբռնում արտահայտությունը: Թերեւս այս ամենի առումով պատահական չէր առանձնազրույցի ընթացքում թուրքական հանրային հեռուստատեսության ուղիղ եթերում արված հետեւյալ մեկնաբանությունը. «Վերջին շրջանում հաճախակի է վիճարկվում թուրք-ամերիկյան գործակցությունը: Վիճարկման է ենթարկվում նաեւ այն, թե դա որքանով է ռազմավարական»:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին, ապա նախագահ Բուշն ընդգծել է դրանց կարգավորման անհրաժեշտությունը, իսկ վարչապետ Էրդողանը պատասխանել է նրան՝ ասելով. «Բայց առաջընթաց քայլը թող Հայաստանը կատարի»: Այդ մասին հունվարի 29-ի համարում տեղեկացրել է թուրքական «Վաքանը»: Թեեւ սա լուրջ թերթ չէ, բայց եւ այնպես դրա գրածները հեռուստատեսությամբ հաստատեց ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Նուզհեթ Քանդեմիրը:

Ուրեմն «Վաքանի» գրածները ճիշտ են, իսկ թուրք-ամերիկյան գործակցության, ինչպես նաեւ դրա ռազմավարական բնույթի շուրջ ծավալվող վիճարկումները՝ հիմնավոր: Այլապես Թուրքիայի վարչապետն ԱՄՆ-ի նախագահին, այն էլ Սպիտակ տանը, երբ կասկածի տակ է դրվում թուրք-ամերիկյան ռազմավարական դաշինքի նպատակահարմարությունը, այդպիսի պատասխան չէր տա: Էրդողանն այս պատասխանով ոչ՝ միայն Բուշի հետ առանձնազրույցից իր հիասթափությունն է արտահայտել, այլեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար առաջընթաց քայլը Հայաստանից պահանջելով մի անգամ եւս հաստատել է Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը հակակշռելու անհրաժեշտությունը:

Մշակույթ

Մեր տանելու խաչը

Իմ կյանքի երեսն ալիքներ շրջող ծովն իր խորքերում մասունքներ էր թաղել, որոնք երբեմն հիմա են արքանում, երբ ալեբախումներից հոգնած ես եմ նայում այնտեղ, ուր դեռ նոր էր բացվում իմ ծովի երեսը: Տեսնում եմ ինձ այնտեղ, արեւոտ օրերի մեջ, երբ հայոց սիրտ քաղաքից հեռու, փոքրիկ մի գյուղում, ուսուցչուհու բերանից լսել էի Վարդգես Պետրոսյան անունը, ու ծարի մեջ իմ սրտի հետ բաբախող սիրտ դարձնելով՝ ուղարկել իրեն: Հետո ծարաների մեջ գնացին ու եկան իրար հետ գրուցող մեծի ու փոքրի սրտերը, եւ հազար ափսոս, որ այդպես էլ մնացին իմ կյանքի երեսն ալիքներ շրջող ծովի հասակում:

Նրանց աննյութեղեն հիշատակն է արքնացել հիմա, ու ես ինձ տեսնում եմ պիոներների մեջ առաջինը՝ ով ողջունելու էր Վարդգես Պետրոսյանին, հայոց սիրտ քաղաքից հեռու նրան սպասողների մեջ:

Հետո, երբ փիչ-փիչ նշմարվեցին հեռուներում հավաքվող քամիները, իմ ծովի հանդարտ երեսին կնճռներ հայտնվեցին: Ալիքները փրփուրներ հանեցին երես, ու կնճռների տակն անցած ծարված մասունքները գնացին ապրելու ծովի խորքերում: Քիչ-փիչ հանելու եմ նրանց ու գուրգուրելու, անկախ այն բանից՝ կիմանաք այդ մասին, թե՝ չեք իմանա:

Այսօր, երբ իմ կյանքում արդեն չապրած տարիներս ավելի շատ են, մանկության մեջ ապրած տարիներիս միջից փոքրիկ ծարների հիշատակներ հանելով գուրգուրեցի, եւ շնորհակալ եղա նրանց, ովքեր տվեցին ինձ այդ առիթը, ովքեր հավաքեցին, կազմեցին ու հրատարակեցին ապրած ու չապրած տարիները զանազանել ուսուցանող վարպետի անտիպ հոդվածները:

Իմ պիոներական հպարտությունից, իհարկե, շատ տարիներ հետո աշխատեցի Վարդգես Պետրոսյան բացառիկ ինքնադրսեւորման տեր հայրենասեր հայի հետ կողք-կողքի, ու նա շատ անգամներ նույնիսկ ջախջախեց ինձ, բայց մենք խոսքով արդեն կապված էինք իրար մի անվերջ նամակագրությամբ: Մեր խոսքն այլեւս չէր սպասվում ծարվելուն:

Վաղուց, շատ վաղուց իմ կյանքի ալիքների տակ էին անցել նրան գրած ու չգրած նամակները, բայց մինչեւ այսօր սիրտս դողվում է, երբ նա կրկին դառնում է իմ ուսուցիչը: Հետո գործ չէ զանազանել ապրած ու չապրած տարիները, երբ արդեն եռեւում մի ահռելի ծովի ահռելի փոթորիկ կա: Նստել ու զանազանել, նշանակում է ծնկել ու խոստովանել, ծնկել ու խոստովանել Ուսուցչի առաջ, որի դասը ոչ միայն գեղարվեստական խոսք է ու հրավառ հրատարակություն, այլեւ անդադրում մտավորականի մտքի հետ ու առաջ հայոց ամեն ոլորտների, մեծի ու փոքրի, արմատի ու էության, ամեն-ամեն ինչի շուրջը...

Խոստովանել-գրուցել, գրուցել-խոստովանել, մանավանդ որ կա հրաշալի առիթ՝ հրապարակախոսական հոդվածների անտիպ ժողովածուն:

«Եվ մտավորականը երբեմն շփոթվում է. ո՞վ է ինքը, ի՞նչ են սպասում իրենից եւ ո՞վ է ժողովուրդը, որի ծգտումներն ինքը պիտի արտահայտի»:

Այս մտորումները կծկվում են սրտի տակ, ու փորձում է ետ տալ կծիկը, ետ տալ ցավը՝ բալասաններ գտնելու նրա՝ «սրբազան խաչի ու պղնձե մանրադրամի» համար, որ իր ժողովուրդն է:

Անցնում է Հանրապետության հրապարակով, բռնում են թեւից, թե՝ «էս ի՞նչ պիտի լինի, վերջն ի՞նչ պիտի լինի»: Ուզում է մտնել քաղխորհուրդ՝ քաշում են թեւից, թե՝ «Ուրեմն, մենք դրա՞ համար պայքարեցինք...»: Նայում է քաշողի դեմքին, ծանոթ է միտինգներից: Լսում է կողքինի ձայնը՝ «Ուրեմն, մե՞զ էլ պիտի անցագրով թողնեք...»: Հերթապահն իրեն է դիմում, թե՝ «Պարոն Պետրոսյան, կարելի՞ է Ձեր վկայականը...»:

Կծիկը շարունակվում է կծկվել. ուրեմն միտինգին մասնակցողը պայքարող է, ուրեմն անձը հատատողն անունը չէ, այլ՝ վկայականը, ուրեմն վկայականի տերը ժողովուրդը չէ, իսկ ո՞վ է ժողովուրդը: Այ, նա, ով կանգնած քաշում է իր թեւից՝ իր ցավը: Առնում է նրան իր կրակե շապիկի մեջ, արագ-արագ գնում, կռանում գրասեղանի վրա, ուր թափված թղթերի արանքից ակնդետ իրեն են նայում «Հոգեբանական փշալարի» տարբեր կողմերում մատնացուցած ճանապարհից մի հատված.

«- Խեչո՞...

- Ալո՛, ասա՛, Սամո՛, Խեչոն լսում է:

- Խեչո՞...

- Հա՛, ասա՞:

- Խեչո, ասում ես հասա՞տ դու ես:

- Իհարկե, ես եմ, Խեչոն եմ:

- Մարդ ես դարձել, հեռախոսով ես խոսում, էլի (...)

Այսուհանդերձ Խեչոն բարձր ծիծաղեց:

- Խեչո,- ասաց Սամոն,- դու շունչանորդի ես:

Դրանով Սամոն ուզում էր ասել, որ եթե պետք լինի, ինքն էլ կզանգահարի:

Հետո հովիվները Սամոյի ձեռքից ընկալուչը խլեցին եւ ով ինչ գիտեր՝ ասաց Խեչոյին, նրա ծիագող հոր, ծիագող պապի, Խեչոյի ծիագող պապի պապի մասին: Դրանով հովիվներն ուզում էին գոված լինել հեռախոս հնարողին, հնարողի հորը, պապի պապին»:

Այդպես էր «երկիր մոլորակից Անտառամեջին հատկացված տեղամասում» (Հ. Մաթեւոսյան, «Մենք ենք, մեր սարերը»): Միասնական հանրագումար սիրո պարտեզ էր սա:

Հայոց պարտեզը մտնելու ճանապարհը սա էր: Հենց այս ճամփով էլ գնաց Վարդգես Պետրոսյանը, հենց այս պարտեզն էլ մտավ, բայց տեսավ, որ իր ետեւից եկողները պարտեզին անհարիր բեռներով են եկել, շատերն էլ ծիկրակում են դեռ պարտեզը չմտած... Անմիջապես որակեց նրանց այն խոսքով, որով այսօր վերնագրվել է նրա ալեկոծ մտքերի ջրվեժից մի ափ ջուր խլած տիկնանց կազմած գիրքը:

Ի՞նչ լսեց հեռախոսի մյուս ծայրում, երբ շապիկը կրակված մտել էր իր տարածքի պարտեզը: Երեւի լռեցին, երեւի հայհոյեցին, երեւի սպառնացին ընկալուչի մյուս կողմում: Ի՞նչ սպառնացին, որ ցա՞ծ դնի իր վիճակը: Հարցնեմ Հրանտին. «Անտառամեջի պարտեզում կասե՞ն ցած դիր վիճակդ, թե՞ կասեն տուր, տուր մի փիչ էլ ես գրկեմ, ես շալակեմ»:

«Չէ, սա Անտառամեջ չէ», կասի Հրանտը: Քո ետեւից տարածք մտնողները ցած դիր, ասում էին, ցած դիր վիճակդ՝ բոլորովին ուրիշ բանի համար: Բայց դու քո ցավի հետ նույն կրակե շապիկի մեջ էիր, անբաժան ու նրա հետ էլ կռացար, նրա հետ էլ իջար գետնին:

Անտառամեջցին ասում էր. «Ես քո ծիագող պապի...», ու սիրում էր այդ պապին: Հիմա որ ասենք. «Ես քո դավադիր...», ո՞նց սիրենք... Անտառամեջի դասը վարող Ուսուցիչն էլ գնաց, ու չիմացանք, թե իմաստասերների մտքերը խառնելով գտա՞վ այդ հարցի պատասխանը:

Դժվար հարցի դժվար պատասխան: Ես նորից եմ թերթում նոր հրատարակված ժողովածուն: Փակում եմ: Ուսուցչի թիկունքում զարդանախշ խաչքար է: Կարո՞ղ ես գտնել զարմանահրաշ, իրար ագուցված նախշի ծայրն ու նրանով գնալ, հարթելով ճանապարհը: Չէ, սա խաչ է: Մեր տանելու խաչն է, մտածում եմ ու մտնում Անտառամեջի տարածքը: Հետս վերցրել եմ Վարդգես Պետրոսյանի խոսքերով՝ «Մեր ժողովուրդն իմն է՝ ինչպես... իմ վիճակը» վերնագրված նրա մտքերի նոր ժողովածուն:

ՖԵԼԻՔՍ ԲԱՆՏՈՒՆՅԱՆ

* *Վարդգես Պետրոսյան «Մեր ժողովուրդն իմն է՝ ինչպես... իմ վիճակը» (Հրապարակախոսական հոդվածների ժողովածու), Երեւան, «Հայաստան», 2003, 216 էջ:*

ԿՐՔԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Հետաքրքիր հայտագրություն «Արարատին»

Այս խորագրի ներքո «AGBU» հանդեսի նոյեմբերյան համարում լրագրող Հրաչ Վարդանյանն ի մի է բերում «Արարատ» ֆիլմի հաջողություններն ու ձախողումները: Նա գրում է, որ գալա-հանդիսություններից ու պրեմիերաներից հետո հայազգի անվանի ռեժիսոր Ատոմ Էգոյանը բավական ժամանակ է ունեցել վերլուծելու հակասական կարծիքներ առաջացնող «Արարատի» առավելություններն ու թերությունները: Հայոց ցեղասպանությունն արծարծող այս ֆիլմը միջազգային տարածում ստացավ ցուցադրման առաջին շաբաթվա ընթացքում՝ դառնալով համար առաջինը Հյուսիսային Ամերիկայում, արժանանալով «Օսկարի» կանադական տարբերակ «Ջենի» մրցանակին եւ կանադական ֆիլմի համար բացելով նոր ուղիներ Սինգապուրում, Չիլիում, Ռուսաստանում եւ այլուր:

«Ամենազարմանալին անհատ կինոտարածողների բուռն ցանկությունն էր այդ երկրներում, որն անչափ հաճելի վարձատրություն է ինձ համար: Ես մեկ ճապոնիայում եմ, մեկ Գերմանիայում եւ այլ երկրներում: Իմ նկարահանած բոլոր ֆիլմերից հատկապես այս մեկի հետ զգում եմ, որ իմ ներկայությունը անհրաժեշտություն է», խոստովանում է Էգոյանը:

Դրամարկղային աննախընթաց հաջողությունը (հայկական թեմայով ֆիլմի համար) այնուամենայնիվ չնվազեցրեց ֆիլմի նկատմամբ մարդկանց եւ հատկապես քննադատների տարածայնությունները: «Որոշ մարդիկ գտնում են, որ ֆիլմը չափազանց բարդ է, իսկ ուրիշները ֆիլմը հավանում են հենց այդ բարդության համար: Կարեւորն այն է, որ յուրատեսակ մի ֆորում է ստեղծվում, որտեղ ոչ ոք անտարբեր չէ ֆիլմի նկատմամբ», բացատրում է Էգոյանը:

Ամերիկայում «Լոս Անջելես թայմս» եւ «Վաշինգտոն փոստ» հեղինակավոր թերթերը նոպատավոր գրախոսականներ հրատարակեցին իրենց էջերում: «Նյու Յորք թայմսը» անվանեց «Տարվա ամենաշատ խորհրդածությունների տեղիք տվող ֆիլմը»:

«Իսկ ինձ համար հպարտության առիթ էր, որ գրախոսականներում երբեք չնշվեց «այսպես կոչված» բառերը, որոնք մինչ այդ միշտ ուղեկցել են Հայոց ցեղասպանության մասին բոլոր տեսակի տեղեկատվություններին», ասում է Էգոյանը:

Հաջողություններին զուգընթաց «Արարատը» դեռ որոշ դժվարություններ չի հաղթահարել: Առաջին հերթին չի լուծվել Թուրքիայում ցուցադրելու հարցը: Կանչի փառատոնում Ստամբուլի ֆիլմերի փառատոնի կազմակերպիչ տնօրեններից մեկը ոչի կանգնելով ներկաներին հավաստիացրել է, որ «Արարատն» անպայման կցուցադրվի Ստամբուլում: Աշխարհի թերթերը գրել են այդ մասին, բայց առայժմ «սայլը տեղից չի շարժվում»: «Բելժ» ֆիլմը ներկայումս պայքարում է դասական շրջանակներում՝ ֆիլմն առանց կրճատելու ցուցադրելու իրավունք ստանալու համար: «Մենք ցանկանում ենք վերացնել վախը նրանց միջից, ապացուցելով, որ ֆիլմը վնաս չի կարող հասցնել», նշում է «Բելժ» ֆիլմի սեփականատերերից Այսեգյուլ Չեբինը:

Էգոյանին մեծապես զարմացրել է Բեյրութի փողոցներում «պատրաստված է Լեհաստանում» պիտակով ֆիլմի DVD տարբերակների գոյությունը: Ընդհանրապես տեսահենությանը բացասաբար վերաբերվելով, Էգոյանը նաեւ գոհունակություն է հայտնել, որ այդ ձեւով ֆիլմը ցուցադրվում է ճշմարտությունը չընդունող մի շարք երկրներում: Անցյալ հուլիսին հրապարակ իջած երկսկավառակ DVD-ները ունեն նաեւ CD-ROM-ի հնարավորություն, որտեղ ցեղասպանության վերաբերյալ հավելյալ տեղեկություններ

են տրված: Նյու Յորքում հրատարակվել է նաեւ «Արարատ ֆիլմը» խորագրով մի գրքույկ, որն ընդգրկում է սցենարը եւ տեսարաններ ֆիլմից:

«Արարատը», շարունակում է իր հաղթարշավը, բայց Էգոյանն ասում է, որ Հոլիվուդում կնկարահանվի մի ֆիլմ այդ նույն թեմայով: «Բայց ես չպիտի լինեմ այդ մեկը նկարահանողը», ասում է նա, որն այժմ զբաղված է Վագների «Ring Cycle» օպերայի թեմադրությամբ, որն ակնկալվում է Տորոնտոյում հանդիսատեսին ներկայացնել այս տարվա ընթացքում: Բացի այդ, նա մտադիր է էկրան բարձրացնել Ռուբերտ Հոլմսի «Որտեղ ճշմարտությունն է» վեպը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

Ավագների աշխույժ գործունեություն Սբ. Վարդան տաճարում

Հակառակ սառնամանիքներին, Նյու Յորքի Սբ. Վարդան տաճարի Ավագների խումբը ջերմ մթնոլորտի բոլոր նախադրյալներն ապահովող միջոցառումների մի հետաքրքրական շարք է ծրագրել անցկացնել, գրում է հայտնի լրագրող Ֆլորենս Ավագյանը ԱՄՆ-ից: Հունվարի 22-ից սկսած ամեն հինգշաբթի խմբի ակտիվիստները կազմակերպելու են դասախոսություններ, երաժշտական հանդիպումներ, ֆիլմերի ցուցադրումներ եւ գրոսարավներ:

Անցյալ տարվա աշնանային միջոցառումներից հիշատակության արժանի են Միրիամ Աբբարյանի եւ Ֆլորենս Ավագյանի դասախոսությունները, երգչուհի Մարո Փարթամյանի եւ դաշնակահարներ Աննա Մինքանճյանի ու Ժանետ Չիրիճյանի ելույթները, ինչպես նաեւ այցելությունները Հարթֆորդի Սբ. Գեւորգ հայկական եկեղեցին եւ, Ճննդյան տոների առթիվ, «Ռեդիս Սիթի Մյուզիք Հոլ», որտեղ ելույթ է ունեցել հայտնի «Ռոմեքս» խումբը:

Հ. Ծ.

ԹԱՂՐԱՆԿԱՐԾԻ ԱՇՔԵՐՈՎ

Աղասին վայր դրեց լիազորությունները



Մելբուռնում ընթացող թենիսի Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մրցաշարում հայտնի դարձավ եզրափակիչի առաջին մասնակիցը: Դա ռուսաստանցի թենիսիստ Մարատ Սաֆինն է, որը չափազանց լարված ու համառ մրցադայտարում պարտության մատնեց փորձառու Անդրե Աղասուն: Հիշեցնենք, որ Աղասին անցյալ տարի հաղթող է ճանաչվել Ավստրալիայի բաց առաջնությունում եւ նոպատակադրվել էր այս տարի կրկնել հաջողությունը: Սակայն նրա ճանապարհը փակեց Մարատ Սաֆինը, որը վնասվածքից ապաքինվելուց հետո կրկին լավ մարզավիճակ է ձեռք բերել:

Հաղթողին որոշելու համար թենիսիստներին հարկ եղավ կենտրոնական կորտում 5 խաղափուլ անցկացնել: Առաջին խաղափուլն անցավ հավասար պայքարում: Երկու մրցակիցներն էլ ձգտում էին իրենց մատուցման ժամանակ միավորներ վաստակել: Եվ պետք է ճշել, որ դա նրանց հաջողվում էր: Առաջին խաղափուլի ելքը վճռվեց թայ-բրեյքում: Սաֆինին հաջողվեց հաղթել 7-6 հաշվով:

Երկրորդ խաղափուլն անհաջող սկսվեց Սաֆինի համար: Աղասին հաշվի մեջ առջեւում էր ընթանում եւ հաղթանակի համար անհրաժեշտ էր եւս երկու միավոր վաստակել: Սակայն Սաֆինին կրկին հաջողվեց հավասարեցնել հաշիվը: Իսկ թայբրեյքում հաջողությունը դարձյալ ուղեկցեց Սաֆինին: Հաջորդ խաղափուլում պատմությունը գրեթե նույնությամբ կրկնվեց եւ գործը կրկին հասավ թայ-բրեյքի, բայց այս անգամ արդեն Աղասին հաջող խաղաց եւ շահեց պարտիան (7-5):

Չորրորդ խաղափուլում արդեն Աղասին իր տարերքի մեջ էր: Նա վերելքով անցկացրեց պարտիան եւ զգալի առավելությամբ հաղթեց (6-1): Թվում էր, թե մրցախաղում բեկում կմտնի եւ Աղասուն ի վերջո կհաջողվի նվաճել եզրափակիչի ուղեգիրը: Բայց Սաֆինն իր մեջ ուժ գտավ փոխելու մրցակցության ընթացքը եւ շահելով վճռորոշ խաղափուլը (6-3), մտավ եզրափակիչ:

Այսպիսով, Մարատ Սաֆինը դարձավ եզրափակիչի առաջին մասնակիցը: Աղասու հետ անցկացրած 5 հանդիպումներից դա Մարատ Սաֆինի 2-րդ հաղթանակն էր: Սաֆինի մրցակիցը հայտնի կդառնա այսօր: Կիսաեզրափակիչի մյուս խաղում ուժերը կչափեն շվեյցարացի Ռոժե Ֆեդերերն ու իսպանացի Խուան Կառլոս Ֆերերոն:

Կանանց մրցաշարում եզրափակիչի ուղեգիր նվաճեց բելգիացի թենիսիստուհի Ժյուստին Էնենը, որը երկու խաղափուլում միեւնույն 6-2 հաշվով հաղթեց Սուլուագային:

ՈՒԵՖԱ-ն կենտարկի Ուելսի բողոքը

Ինչպես տեղեկացրել ենք, եգոր Տիտովի որակազրկման առիթով Ուելսի ֆուտբոլի ֆեդերացիան բողոք է ներկայացրել ՈՒԵՖԱ՝ պահանջելով Ռուսաստանի հավաքականին պարտություն գրանցել եւ չթույլատրել մասնակցելու Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլին: Հիշեցնենք, որ եգոր Տիտովի օրգանիզմում արգելված խթանիչի օգտագործման հետքեր էին հայտնաբերվել հենց Ուելսի հետ անցումային խաղից հետո կատարված դոպինգ սուգման արդյունքում: Ուելսի ֆեդերացիան գտնում է, որ Ռուսաստանի փոխարեն Եվրոպայի առաջնությունում պետք է հանդես գա իր երկրի հավաքականը:

ՈՒԵՖԱ-ն Ուելսի հավաքականի բողոքը պետք է քննարկի փետրվարի 3-ին: Ընդունվելիք որոշման վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Ուելսի լրատվամիջոցների տեղեկատվության համաձայն, ֆեդերացիայի ղեկավարությունը հաջողության հասնելու հնարավորությունները ցածր է գնահատում: Սակայն եթե պահանջը չբավարարվի, ապա Ուելսի ֆեդերացիան պատրաստվում է բողոք ներկայացնել արբիտրաժային դատարան:

Իր հերթին ՈՒԵՖԱ-ի ներկայացուցիչը նշել է, որ դժվար թե Ուելսի բողոքը բավարարվի, քանի որ մինչ օրս նման դեպք չի արձանագրվել, որ ֆուտբոլիստի դոպինգ օգտագործելու պատճառով որեւէ հավաքականի զրկեն մրցաշարի մասնակցությունից:

Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահ Վյաչեսլավ Կոլոսկովը հայտարարել է, որ ՈՒԵՖԱ-ի կանոնակարգում կա նման կետ, որի համաձայն կարող են չեղյալ համարել հանդիպման արդյունքը կամ վերախաղարկել այն: Սակայն, ըստ Կոլոսկովի, վերջին 10 տարիների ընթացքում դեռ երբեք այդ կետը չի կիրառվել:

Կոլոսկովի համոզմամբ, ՈՒԵՖԱ-ն հանդիպման արդյունքը կթողնի նույնը, եւ Ռուսաստանի հավաքականը հանդես կգա Պորտուգալիայում: Բացի այդ, Կոլոսկովը նշել է, որ մինչ օրս ՖԻՖԱ-ն Տիտովի որակազրկումը չի տարածել իր հովանու տակ անցկացվող մրցաշարերի վրա, ուստի նա կարող է դեռեւս հանդես գալ ազգային հավաքականում, ինչպես նաեւ Ռուսաստանի առաջնությունում: Իրենց հերթին Մոսկվայի «Սպարտակն» ու եգոր Տիտովը բողոքարկել են ՈՒԵՖԱ-ի որոշումը: Այդ բողոքը եւս պետք է քննարկի ՈՒԵՖԱ-ն: Կոլոսկովը Տիտովին խորհուրդ է տվել անձամբ ներկա գտնվել ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեի նիստին, ինչը կարող է նպաստել դրա անդամների բարյացակամ վերաբերմունքին եւ ավելի մեղմ պատժի ընդունմանը:

Իռլանդացիներն ընտրում են Լիվերպուլը

Ֆուտբոլի Իռլանդիայի ֆեդերացիան բանակցում է անգլիական «Լիվերպուլի» ղեկավարության հետ «էնֆիլդ» մարզադաշտի վարձակալության շուրջ: Բանն այն է, որ Դուբլինում գտնվող երկրի գլխավոր մարզադաշտի՝ «Լենդաուն Ռոադի» վերակառուցման աշխատանքները տեխնիկական պատճառներով ձգձգվում են, ուստի իռլանդացիները նախաձեռնում են 2006 թ. աշխարհի առաջնության ընտրական մրցափուլի սեփական հարկի տակ կայանալիք հանդիպումներն անցկացնել Լիվերպուլում: Եթե անգլիացիները մերժեն իռլանդացիների խնդրանքը, ապա վերջիններս պատրաստ են որոշել սեփական խաղադաշտ օգտագործել Գլազգոյի «Սելթիկ պարկը», որում իր հանդիպումներն է անցկացնում տեղի «Սելթիկը»:

Բոնանոն տեղափոխվեց «Մուրսիա»

«Բարսելոնի» արգենտինացի դարպասապահ Ռոբերտո Բոնանոն, որը շաբաթվա ընթացքում էր տեղ գտնում թիմի հիմնական կազմում, որոշեց տեղափոխվել «Մուրսիա»: 33-ամյա դարպասապահը վերջին կես տարում ինքնուրույն էր «Մուրսիա»: Ըստ Բոնանոյի, «Բարսելոնում» անհասկանալի բաներ էին կատարվում: Ըստ Բոնանոյի, «Բարսելոնում» անհասկանալի բաներ էին կատարվում: ակումբի մարզիչները անընդհատ փոխում էին դարպասապահները՝ հնարավորություն չտալով նրանցից որեւէ մեկին բավական ժամանակ հանդես գալ հիմնական կազմում:

Բոնանոն վերջին շրջանում «Մուրսիա» տեղափոխված հարավամերիկացի երրորդ ֆուտբոլիստն է: Թիմում ընդգրկվել են նաեւ արգենտինացի Լեոնել Գանսեդոն եւ էկվադորցի Իվան Ուրտադոն: Մադրիդի «Ռեալի» հետ խաղում Բոնանոն նշեց իր նորամուծությունը «Մուրսիայում»:

Սեմ Մաֆիլոռյը պաշտոնանկ արվեց

Անգլիական «Ուիմբլդոն» թիմի նախկին ֆուտբոլիստ Լորդ Սանչեսը նշանակվել է Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի գլխավոր մարզիչ: Այդ պաշտոնում նա կփոխարինի Սեմ Մաֆիլոռյին, որի ղեկավարությամբ հյուսիսիռլանդացիներն անհաջող հանդես եկան Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: Հիշեցնենք, որ Մաֆիլոռյի օրոք ազգային հավաքականը 1297 րոպե շարունակ չէր կարողացել գրավել մրցակիցների դարպասը:

44-ամյա Սանչեսը 80-ական թթ. 3 անգամ ճանաչվել է Հյուսիսային Իռլանդիայի լավագույն ֆուտբոլիստ: 1988 թ. Անգլիայի գավաթի եզրափակիչում նա դարձել էր «Լիվերպուլի» դարպասը խփած հաղթական գոլի հեղինակը: Սանչեսը հայտարարել է, որ իր համար մեծ պատիվ է հավաքականը գլխավորելը:

ԲՈՒՏՔԱՄԱՐՏ

Բանակցությունների համար մեկ ամիս է հատկացվել

Բոնցֆամարտի համաշխարհային խորհրդի նախագահ Խոսե Սուլեյմանը հայտարարել է, որ փետրվարի 1-ից մեկ ամսվա ընթացքում Լենոքս Լյուիսն ու Վիտալի Կլիչկոն պետք է բանակցեն եւ վճռեն առաջիկա մրցամարտի հետ կապված բոլոր հարցերը: Եթե մինչեւ մարտի 1-ը կողմերը համաձայնության չգան մրցամարտի անցկացման վերաբերյալ, ապա հաջորդ 15 օրվա ընթացքում բոնցֆամարտի համաշխարհային խորհուրդն ինքը կորոշի ժամկետն ու վայրը, ինչպես նաեւ մրցանակային հիմնադրամի չափը: Եթե Լենոքս Լյուիսը չկատարի բոնցֆամարտի համաշխարհային խորհրդի պահանջները եւ հրաժարվի մենամարտից, ապա կզրկվի աշխարհի չեմպիոնի տիտղոսից:

Ինչ վերաբերում է Վիտալի Կլիչկոյին, ապա նա պատրաստ է սկսել բանակցությունները Լյուիսի հետ:

Նիստելրոյը նոր պայմանագիր կկնքի

Անգլիայի «Մանչեսթր յունայթեդի» իռլանդացի հարձակվող Ռուդ վան Նիստելրոյը պատրաստվում է նոր պայմանագիր կնքել ակումբի հետ: Հնգամյա պայմանագիրը կստանա 23,5 մլն ֆունտ ստեռլինգ (42,7 մլն դոլար): Հոլանդացու շաբաթական աշխատավարձը կկազմի 90 հազար ֆունտ (164 հազար դոլար): Այսպիսով, Ռուդ վան Նիստելրոյը թիմի ավագ Ռոյ Քինի հետ կլինի «Մանչեսթր յունայթեդի» ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը: Նշենք, որ 27-ամյա ֆուտբոլիստի գործող պայմանագիրը լրանում էր 2,5 տարի հետո: Նիստելրոյն Անգլիայի չեմպիոնի կազմում այժմ է ընկնում արդյունավետ խաղով: Թիմի կազմում անցկացրած 121 խաղում իռլանդացին խփել է 98 գնդակ:

Դմիտրի Սիչովը տեղափոխվեց «Լոկոմոտիվ»

Մոսկվայի «Սպարտակի» նախկին ֆուտբոլիստ, ֆրանսիական «Մարսելում» հանդես եկող Դմիտրի Սիչովը վերադարձավ հայրենիք: Նա 4 տարով պայմանագիր է կնքել Մոսկվայի «Լոկոմոտիվի» հետ: Սիչովի համար «Լոկոմոտիվը» «Մարսելին» վճարել է 3 մլն եվրո: Համաձայն պայմանագրի, այդ գումարի 20 տոկոսը պետք է փոխանցվի Սիչովի նախկին ակումբին՝ Մոսկվայի «Սպարտակին»: Ներկայումս Սիչովը «Լոկոմոտիվի» հետ ուսումնամարզական հավաքում է: Սիչովը նշել է, որ շաբաթ ուրախ է հայրենիք վերադառնալու համար: Իսկ «Լոկոմոտիվն» ընտրել է, քանի որ թիմի խաղառոճն իրեն դուր է գալիս:

Աշխարհի չեմպիոնը հնարավոր է գլխավորի Ադրբեջանի հավաքականը

1970 թ. ֆուտբոլի աշխարհի չեմպիոն, բրազիլացի Կառլոս Ալբերտո Տորեսը Ադրբեջանի ազգային հավաքականի գլխավոր մարզչի թեկնածուներից է: Բրազիլիայի հավաքականի նախկին ավագն այս օրերին գտնվում է Բաքվում, որտեղ հանդիպումներ է ունենում ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչների հետ:

Զորկաեֆը հնարավոր է երկարաձգի պայմանագիրը

Աշխարհի 1988 թ. եւ Եվրոպայի 2000 թ. չեմպիոն Յուրի Զորկաեֆն ակումբի ղեկավարության հետ քննարկում է պայմանագրի ժամկետը մեկ տարով երկարաձգելու հարցը: «Բոլտոնի» ղեկավարությունն առաջարկել է նրան մեկ մրցաշրջան եւս շարունակել ելույթները թիմում: Զորկաեֆն առայժմ չի տվել իր համաձայնությունը, սակայն նշել է, որ առաջարկն իրեն դուր է գալիս, քանի որ շաբաթ է սիրում ֆուտբոլը: 35-ամյա Զորկաեֆը ֆուտբոլային իր հարուստ կենսագրության ընթացքում հանդես է եկել «Պարի Սեն ժերմենում», Միլանի «Ինտերում», գերմանական «Կայզերսլաուտերնում», Ֆրանսիայի ազգային հավաքականի կազմում հասել է նշանակալի հաջողությունների:

Տավլարիդիսին վարձավճարով տրամադրել են «Լիլին»

Հունաստանի ազգային հավաքականի եւ Լոնդոնի «Արսենալի» պաշտպան Եվսաֆիոս Տավլարիդիսն ընթացիկ մրցաշրջանի մնացած հատվածը կանցկացնի ֆրանսիական «Լիլում»: 23-ամյա պաշտպանը, որը չէր ընդգրկվում թիմի հիմնական կազմում, խնդրել էր ակումբի ղեկավարությանը թույլատրել տեղափոխվել այլ թիմ: Իր այդ ցանկությունը նա պատճառաբանել էր խաղային պրակտիկա ունենալու անհրաժեշտությամբ, քանի որ ամռանը Հունաստանի հավաքականը մասնակցելու է Պորտուգալիայում կայանալիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլին: «Լիլը» պաշտպանական օղակում որոշակի հիմնահարցեր ուներ, ուստի երկու ակումբները շատ շուտ համաձայնության եկան ֆուտբոլիստի վարձակալության հարցում:

Տավլարիդիսն «Արսենալ» էր տեղափոխվել 2001 թ. ամռանը հունական «Իրակլիսից»: Երկուսուկես տարվա ընթացքում նա «Արսենալում» շատ քիչ հանդիպումների է մասնակցել: Անցյալ մրցաշրջանում հույն ֆուտբոլիստը վարձավճարով տրամադրվել էր «Պորտսմուտին»:

Էջը պատրաստեց
ԱՐԱՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Խոր հիասթափություն հրեական կոնգրեսի ինքնակամ որոշման առթիվ

Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի Մ. Նահանգներ կատարած այցելությանը եւ նրան «Խիզախության մրցանակին» արժանացնելու տեղի Ամերիկա-հրեական կոնգրեսի (ԱՀԿ) մտադրություններին, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր **Հարութ Սասունյանը** գրում է, որ Ամերիկա-հելլենական ինստիտուտը (ԱՀԻ) ու Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն (ԱՀԱԿ) համատեղ նամակ են հղել ԱՀԿ-ին՝ արտահայտելով իրենց «խոր հիասթափությունն» այդ մրցանակի առթիվ: Նրանք հատկապես ընդգծել են, որ «Էրդողանն այն երկրի վարչապետն է, որն ափխարհում ամենավաս բնութագիրն ունի՝ մարդկանց տանջելու, նրանց իրավունքները ոտնահարելու եւ լրագրողներին բանտարկելու առումով: Նրա կառավարությունը զավթել է անկախ Կիպրոսի Հանրապետության ավելի քան մեկ երրորդ մասը եւ շարունակում է խոչընդոտել կղզու խնդրի խաղաղ կարգավորման ամեն մի փորձ: Նրա ղեկավարությամբ թուրքական կառավարությունը բացահայտորեն ճնշում է գործադրում Մ. Նահանգների, Իսրայելի եւ այլ պետությունների վրա, որ ժխտեն Հայոց ցեղասպանությունը: Դեռ ավելին՝ նրա կառավարությունը շրջափակված է պահում Հայաստանը, անարդար սահմանափակումներ դնում Թուրքիայի քրիստոնեական փոքրամասնությունների վրա եւ իրականացնում էթնիկական զտման քաղաքականություն՝ զրկելով երկրի քուրդ բնակչությանն ամենատարրական իրավունքներից: Սրանք այն միջոցառումները չեն, որով մի երկրի ղեկավար պետք է արժանանա Ամերիկա-հրեական կոնգրեսի խրախուսական մրցանակին: Մենք չենք կարծում, որ նրան պատվելու ձեր այդ որոշումն արտացոլում է ընդհանրապես Ամերիկայի հրեական համայնքի տեսակետը»:

Հատկապես այս վերջին արտահայտությունը պատշաճելու նպատակով ԱՀԻ-ն եւ ԱՀԱԿ-ը 20 այլ հրեական խմբակցությունների անուններն են հիշատակել նամակում, որոնք պաշտպանում են կոնգրեսական բանաձեւը՝ ճանաչելու ոչ միայն հայոց, այլեւ ասուրական եւ կամբոջական ցեղասպանությունները:

Հրեական կոնգրեսի անդամներն, իհարկե, ազատ են հետապնդելու իրենց շահերն ըստ իրենց ըմբռնումների կամ ավելի ճիշտ՝ թյուրըմբռնումների, այն էլ ուրիշների հաշվին, որոնք զոհ են դարձել կոտորածների, սակայն պետք է իմանան, որ իրենց այդ քայլերը ցավ են պատճառում բոլոր հայերին եւ վնասում հայ-հրեական հարաբերություններին:

Պարզեւատրվելուց ընդամենը երկու օր առաջ Էրդողանը հանդիպել էր Շվեյցարիայի նախագահի հետ եւ, աղավաղելով փաստերը, անամոթաբար հայտարարել, որ «այդ շրջանում հավասարապես հայեր ու թուրքեր են զոհվել, ու հարցը պետք է թողնել պատմաբաններին»: Ցավոք, նման հայտարարությունները չեն անհանգստացնում ԱՀԿ-ի ղեկավարներին: Երբ ես ԱՀԿ-ի նախագահ Ջեկ Ռոսենին հարցրի, գրում է Սասունյանը, թե ինչու էր իր կազմակերպությունը պատվում Էրդողանին, ստացա հետեւյալ անհեթեթ պատասխանը. «Որովհետեւ Թուրքիան այն երկիրն է, որն օրինակ է ծառայում մահմեդականության շրջանում առավել ժողովրդավարական աղագայի հնարավորություններին»:

Ռուսաստանի ուղղափառ եկեղեցին եւ ՌԼԴԿ-ն Հուսեյնից կատաղ չեն ստացել

Սադդամ Հուսեյնը ծանր հիվանդ է

Ռուսաստանի ուղղափառ եկեղեցին եւ Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը հերքել են իրաքյան «Ալ Մադա» թերթում հայտնված այն հրապարակումը, թե իբր կատաղություններ են ստացել Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնից:

Թերթի պնդման համաձայն, Իրաքի նախկին վարչակազմն ափխարհի 46 երկրների 270 կազմակերպությունների եւ մասնավոր անձանց հետ նավթի միլիոնավոր բարելների մատակարարման պայմանագրեր է կնքել Հուսեյնի քաղաքական պատասխանության դիմաց: Դրանց թվում նշվում են Ռուսաստանի ուղղափառ եկեղեցին, ինչպես նաեւ ՌԼԴԿ-ն եւ ՈԴ կոմկուսը:

Մոսկվայի պատրիարքի արտաքին կապերի բաժնի ներկայացուցիչ Վսեվոլոդ Չապլինը Ինտերֆաքս գործակալությանը հայտարարել է. «Իրաքի ժողովրդի հետ մեր համերաշխությունը, որն արտահայտվել է կրոնապետների հայտարարություններ եւ մեր պատվիրակությունների այցելությունների ձեւով, իհարկե, բնավ կապված չէ ինչ-ինչ չարչիական շահերի հետ»:

ՌԼԴԿ առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին եւս հերքել է իր կուսակցությանը հասցեագրված կատաղության մեղադրանքը: Ընդսմին նա նշել է, որ Իրաքի ղեկավարությունից իրոք նավթ է խնդրել «ռուսական ընկերությունների կարիքների համար»: Ժիրինովսկու խոսքերով, ինքը լոկ պատշաճանել է Ռուսաստանի շահերը: Նրա կուսակից Ալեքսեյ Միտրոֆանովն իր հերթին BBC-ին հայտարարել է, որ Սադդամ Հուսեյնի եւ ՌԼԴԿ-ի համագործակցության փաստը որեւէ մեկի համար գաղտնիք չէ: Բայց դա չի նշանակում, թե համագործակցության դիմաց կարելի է կատաղ պահանջել:

Ինչ վերաբերում է արդեն երկու ամիս ամերիկացիների կալանավորը դարձած Սադդամ Հուսեյնին, նա վերջերս գանգատվում է սամոքսի ցավերից եւ հրաժարվում իր սովորական սննդից: Այդ մասին տեղեկացնում է սաուդյան «Ալ վաթան» թերթը, վկայակոչելով «եվրոպական բարձրաստիճան աղբյուր»: Բժիշկներն առայժմ չեն կարողանում պարզել, թե ինչ հիվանդություն ունի հոգնեցուցիչ հարցաքննություններից ընկճված իրաքցի նախկին բռնակալը: Թերթի տվյալներով, Հուսեյնը տեսախցիկների մշտական հսկողության տակ է եւ զրկված է զբոսնելու իրավունքից:

Ավելի վաղ հունվարի 7-ին, քուվեյթյան «Ալ Անբա» թերթը, Իրաքի կառավարական շրջանակների աղբյուրներ վկայակոչելով գրել էր, թե Սադդամ Հուսեյնը տառապում է քաղցկեղից: Թերթի տվյալներով, ամերիկացի բժիշկները Հուսեյնի հիվանդությունը հայտնաբերել են նրա ձերբակալությունից հետո կատարած զննության ժամանակ: Հայտնաբերվել է խորացած քաղցկեղ: Բժիշկների կարծիքով, Հուսեյնին մնացել է 1,5-2 տարվա կյանք:

Պ. Ռ.

NASA-ն մեղադրվում է Մարսի լուսանկարների գունափոխման մեջ

Ամերիկյան օդաչիազերական գործակալությանը՝ NASA-ին մեղադրանքներ են ներկայացվել, որ «շտկել» է Մարսից ստացված լուսանկարները, որպեսզի դրա մակերեւույթն առավել շատ համապատասխանեցվի «կարմիր» մոլորակի վերաբերյալ հասարակության պատկերացումներին: Այդ մասին գրում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը:

Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, NASA-ի մասնագետները մշակել եւ հրապարակել էին Մարսի մակերեւույթի առաջին գունավոր լուսանկարը, որն ստացվել էր «Օփորթունիթի» մարսագնացից: Մինչ այդ վերջինս հաղորդել էր միայն սեւ-սպիտակ պատկերներ:

Մարսագնացը երկիր է հաղորդել Մարսի մակերեւույթի շատ մանրամասն համայնապատկերը: Նկարն այնքան որակյալ է, որ խոշորացման դեպքում կարելի է նկատել հողի առանձին մասնիկներ:

Ըստ «Դեյլի թելեգրաֆի», բացառված չէ, որ NASA-ն թվային տեխնոլոգիաներով «խմբագրած» լինի մարսյան թույլ դարչնագույն բնապատկերը՝ փոքր-ինչ կարմրացնելով: Նաեւ ենթադրություն է արվում, թե NASA-ի մասնագետները լուսանկարներից դիտավորյալ հանել են կանաչ գույն պարունակող մասնիկները, որպեսզի թարգմանեն Մարսի վրա կյանքի գոյության վկայությունները:

Վերջին վարկածը բուռն քննարկումների թեմա դարձավ այն պահից, երբ NASA-ի փորձագետները «Նյու սայընթիսթ» հանդեսի էջերում նշեցին, որ «գույնի ճիշտ ընտրությունը զարմանալիորեն բարդ ու սուբյեկտիվ աշխատանք է»:

Մարսյան լուսանկարների մեծ մասն արվել է կանաչ, կապույտ եւ ինֆրակարմիր լուսազտիչների միջոցով՝ փոխանակ կանաչ, կապույտ եւ սանդարս կարմիր զտիչների օգտագործման, որոնք թույլ են տալիս ստանալ առավել ճշգրիտ գունային գամայով լուսանկարներ: Մարսագնացի լուսանկարչական խցիկների վրա աշխատած դոկտոր Ջիմ Բելի խոսքերով, ինֆրակարմիր զտիչները պետք է օգտագործվեին միայն աղարների զանազանման հարցում երկրաբաններին օգնելու նպատակով:

Իրականում Մարսը կարմիր է թվում միայն երկրից դիտելիս, հիմնականում՝ այդ մոլորակի մթնոլորտում գորշ փոշու մեծ կենտրոնացման պատճառով:

Թաքուլ Մանասերյանը պահվում է Սան Բերնարդինոյի բանտում

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Արդարություն» խմբակցության անդամ Թաքուլ Մանասերյանը՝ երեկ Վիրջինիա նահանգի Ներգաղթի մեկուսարանից տեղափոխվել է Կալիֆոռնիայի Սան Բերնարդինոյի բանտ, «Ազգին» տեղեկացրեց ձերբակալվածի եղբայրը՝ Արթուր Մանասերյանը: Վերջինս երեկ հրաժ՝ ԱՄՆ-ում բնակվող Թամարա Մանասերյանի օգնությամբ հեռախոսազրույց է ունեցել եղբոր հետ, որը բանտում պահվում է երեք այլ կալանավորների հետ:

Թաքուլ Մանասերյանի առողջական վիճակն օրեցօր վատանում է, ասաց պատգամավորի եղբայրը՝ հավելելով, որ Հայաստանի դիվանագիտական կորպուսը որեւէ օգնություն ցույց չի տալիս նրան: Արթուր Մանասերյանի ասելով՝ այն փաստաթղթերը, որոնք առացուցում են եղբոր արդարացի լինելը, զարմանալիորեն չեն հասել ԱՄՆ համապատասխան ծառայություններին: Մանասերյանն ասաց, որ եղբոր դատավարությունը կսկսվի հաջորդ ամիս:

ՀԺԿ մամլո խոսնակ Ռուզան Խաչատրյանն **«Ազգի»** հետ զրույցում նշեց, որ կուսակցության առաջնորդ Ստեփան Դեմիրճյանը հանդիպումներ է ունեցել ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի եւ երեւանում ԱՄՆ դեսպան Ջոն Օրդուեյի հետ՝ հնարավորության սահմաններում Թաքուլ Մանասերյանին օգնելու ակնկալիքով:

Խաչատրյանի ասելով՝ այն փաստաթղթերը, որոնք հանձնվել էին արտգործնախարարությանը՝ դիվանագիտական խողովակներով ԱՄՆ ուղարկելու նպատակով, հասցեատիրոջը չեն հասել: «Տպավորություն է ստեղծվում, որ պետական մարմիններն ակտիվ չեն: Մենք այդ փաստաթղթերն ուղարկել ենք մեր խողովակներով», ասաց Խաչատրյանը՝ հավելելով, որ, իր տեղեկություններով, Թաքուլ Մանասերյանի դատավարությունը կսկսվի այսօր:

Մանասերյանին առաջադրվել է երեխայի առեւանգման մեղադրանք: Հիշեցնենք, որ խոսքը Մանասերյանի որդու՝ ԱՄՆ-ում բնակվող, ՀՀ քաղաքացի 18-ամյա Արմեն Մանասերյանի մասին է: Մեր տեղեկություններով, դեպքը տեղի է ունեցել 1997 թ.: Ուշագրավ է, որ 1997-ից այս կողմ պատգամավորը բազմիցս եղել է Մ. Նահանգներում, տեսակցել որդուն, սակայն այդ ընթացքում երկիր մուտք գործելի ժամանակ չի ձերբակալվել:

Թ. Հ.

Թբիլիսիում փողոցային առեւտրականների ցույց

Երեկ մոտ 800 ցուցարարներ մի քանի ժամ փակել էին Թբիլիսիի ծերեթելու պողոտան՝ իշխանություններից պահանջելով մեկ տարով հետաձգել այն որոշումը, ըստ որի փետրվարի 1-ից նրանց արգելվում է փողոցային առեւտուրը: Ցուցարարները բողոքի ցույցը շարունակել էին քաղաքապետարանի դիմաց, հաղորդում է «Նովոստի» գործակալությունը: «Եթե մեզ թույլ չտան առեւտուր անել, ապա մենք կմեռնենք սովից», աղաղակում էին ցուցարարները: Սա առաջին ցույցն է ընդդեմ Վրաստանի նոր իշխանությունների՝ Միխայիլ Սաակաշվիլու պատշոնամուտից հետո: Ինքը՝ Սաակաշվիլին երեկ Ստրասբուրգից, որտեղ ելույթ էր ունեցել եվրախորհրդում, ուղեւորվել է Գերմանիա՝ բանակցություններ վարելու այդ երկրի իշխանությունների հետ:

«Ֆինկա» բարեգործական հիմնադրամը հայտարարում է մրցույթ անհատական փոխառությունների բաժնի վարկային մասնագետի պաշտոնի համար:

Ներկայացվող պահանջներն են՝
- բարձրագույն տնտեսագիտական կամ ֆինանսական կրթություն
- համակարգչային ծրագրերի (Word, Excel) լավ տիրապետում ռուսերենի եւ անգլերենի բավարար իմացություն
- սեփական բիզնեսի փորձ (ցանկալի է)

Դիմումներն ընդունվում են մինչեւ փետրվարի 10-ը՝ աշխատանքային օրերին:
Հեռախոս՝ 58-48-63, 54-55-31, 54-55-32
Հասցե՝ Երեւան, Ագաթանգեղոսի փ. 2ա («Սպարտակ» մարզակոմպլեքսի հարեւանությամբ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004 թ. փետրվարի 2-7-ը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ, «Բուրատան» ՍՊ ընկերությունում (հասցեն՝ Հանրապետության 62, նախկին Ալավերդյան), կազմակերպվում է որսորդական զենքի եւ ինքնապաշտպանական միջոցների ցուցահանդես-վաճառք:

Կցուցադրվեն Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող լավագույն որսորդական զենքերը եւ ինքնապաշտպանական միջոցները:

Ցուցահանդես-վաճառքի ընթացքում կգործի զեղչերի ճկուն համակարգ:

ՀԱՅՈՐՍՄԻԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Կենտրոնական բանկը 30.01.2004 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	566.04	560.40	571.70
EUR	1	եվրո	705.74	701.50	710.00
RUR	1	ռուս. ռուբլի	19.87	18.70	21.10

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 29. 01. 2004 Գինը՝ 100 դրամ